

ՐԱՏ ԻՍՐԱԵԼԻ

## ԴԱՄԱՍԿՈՍ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԵ ԴՐԱԾ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՀԱՐԺՈՒՄՆԵՐ ՀԱԼԱԾԵԼՈՒ ԻՐ ԽՈՍՏՈՒՄԸ

ԵՐՈՒՍԱԿԵՄ, 8 (ԱՅՓ).- Իսրայելի յայտարարեց, որ Դամասկոս գործադրության չէ դրած արմատական շարժումներ հայտնելու իր խոստումը: Բարձրաստիճան պաշտոնատար մը քննադատեց Սուրիան, դիտել տալով, որ երկիրին տարածքին տակաին բաց են պաղեստինեան արմատական շարժումներու գրասենյակները: Պաշտոնատարը յիշեցուց, որ Սուրիա վանոնք փակելու եւ արգիլելու խոստում տուած էր Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը: Իսրայելի պաշտոնատարը աւելցուց, որ սուրիացիները կը սխալին, եթէ կը կարծեն, թէ կրնան խաբել ամերիկացիները:

### ՓԱՌԻԼԻ ԾՐՁԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

## ԻՍՐԱՅԷԼԱՑԻՔ ԵՒ ՊԱՂԵՍՏԻՆՑԻՔ Կ'ԱՐՏԱՅԱՅՏԵՆ ԻՐԵՆՑ ԿԵՑՈՒԱԾԸ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՃԱՄՐՈՒ ԲԱՐՏԵՍԻՆ ՄԱՍԻՆ



Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը Միջին Արեւելք այցելութեան նախօրեակին, իսրայելացիներ եւ պաղեստինցիներ կ'արտայայտեն իրենց կեցուածքը խաղաղութեան ճամբու քարտէսին մասին, որուն գործադրութիւնը կարեւոր է Փաուլը այցելութեան յաջողութեան:

գործադրութեան դէմ խաղաղութեան ծրագիրը: Ապու Ռուտայնա դիտել տուաւ, որ եթէ Փաուլը չկարենայ այս արդիւնքին հասնիլ, խաղաղութեան ճամբու քարտէսը կորուսած պէտքէն կատել: Ապու Ռուտայնա ըսաւ նաեւ, որ իսրայելցարդ ծրագիրը գործադրութեան դնելու ճամբուն վրայ որեւէ քայլ չէ առած:

վերադարձնել իսրայելեան ուժերը: Իսրայելացի բարձրաստիճան պաշտոնատար մը ըսաւ, որ կարելի չէ իսրայելեան ուժերը հեռացնել պաղեստինեան շրջաններէն, երբ երաշխիք չկայ, որ տարածքային կազմակերպութիւններու հակակշիռին տակ պիտի չիյնան այդ շրջանները:

Ուղղաթիւնը երեք հրթիռներ արձակեց Այեատ Պէքի ինքնաշարժին վրայ: Այեատ անդամ է Համասի Կիւնէյթ Թեիւն՝ Իզլէտիին Հասամի Փաղանգներուն: Ան սպաննուեցաւ տեղումն վրայ: Համասի պատասխանատուներ դատապարտեցին Այեատի սպանութիւնը:

(ԱՅՓ)

**ԻՍՐԱՅԷԼ ՊԱՏՐԱՍՏ Է ՍՈՒՐԻՈՅ ՀԵՏ ԱՌԱՆՑ ՆԱԽԱՊԱՅՄԱՆԻ ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆՑ**

ԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԵ ԱՐԻԷ ԸԱՐՈՆ

Իսրայելեան պատկերասփիւռի կայանէն հարցազրոյցի մը ընթացքին, Իսրայելի վարչապետ Արիէ Ըարոն յայտարարեց, որ ԹԼԻ Ալի պատրաստ է Դամասկոսի հետ առանց նախապայմանի բանակցութեան:

### ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՏԱԳՆԱԿ

## ԵԱՅԿԻ ՄԻՆՍՔԻ ԽՍՐԱԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՓԱՐԻՉԻ ՄԵՋ

Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման ԵԱԶԿի Մինսքի խմբակի նախագահ երկիրներու ներկայացուցիչները 7 Մայիսին Փարիզի մէջ գումարած են Հանդիպում մը: Քննարկուած են տագնապի քաղաքական լուծման նոր առաջարկներ, որոնց բովանդակութիւնը չէ բացայայտուած: Դիւանագիտական աղբիւրներու համաձայն, Հանդիպումը տեղի ունեցած է Մինսքի խմբակի նախագահ երկիրներու Ռուսիոյ, Ֆրանսայի եւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց փոխ նախարարներու մակարդակի վրայ: Ռուսիոյ կողմէ Հանդիպման մասնակցած է արտաքին գործոց նախարարի առաջին տեղակալ Վիաչեսլաւ Տրուպինը:

Նոր առաջարկները, որոնք հաւանաբար մօտ օրէն ներկայացուին տագնապի կողմերուն, անգամ մը եւս պիտի ուսումնասիրուին Մայիսի կէսերուն, Մոսկուայի մէջ կայանալիք ԵԱԶԿի Մինսքի խմբակի նախագահներու Հանդիպումին: Այնուհետեւ, Մայիս 18-էն 21 Մինսքի խմբակի նախագահները մտադիր են շրջան այցելել: Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման ԵԱԶԿի Մինսքի խմբակ ստեղծուած էր Ռուսիոյ նախաձեռնութեամբ եւ 1993-էն ի վեր կ'աշխատի տագնապի քաղաքական լուծման ուղղութեամբ:

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

### ԻՐԱԷԼԱՆ ԹՂԹԱԾՐԱՐ

## ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՌՈՒՍ ԵՒ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՇՏՈՆԱՏԱՐՆԵՐՈՒ ՄԻՋԵԻ

Իրաքի դէմ հաստատուած պատժամիջոցներն ու վանոնք ջնջելու առաջարկը կապուած էր Իսրայելի արտաքին գործերու նախարարի պաշտոնատարներու միջեւ տեղի ունեցած հանդիպումին:

նեւուն պորպիզ կանգնիլ՝ լուսախաբ ընելով իրաքի ժողովուրդը: Պուշ ըսաւ նաեւ, որ ամերիկեան պատժամիջոցները արդէն իսկ առկայուած են:

Ռուս բարձրաստիճան պաշտոնատարներու հետ ունեցած հանդիպումին ամերիկացի յատուկ պատուիրակ Քիմ Հոլմը Մոսկուայի մէջ ըսաւ, որ Ապահովութեան խորհուրդին ներկայացուելիք բանաձեւի մը առաջարկը փոխանցած է ռուս պաշտոնատարներուն: Բանաձեւը կ'առաջարկէ վերցնել Իրաքի դէմ 12 տարիէ ի վեր հաստատուած ՄԱԿի պատժամիջոցները: Բանաձեւը կ'առաջարկէ նաեւ վերջ տալ «քարիղի փոխարէն սննդանիւթ» ծրագիրին: Հոլմը ըսաւ նաեւ, որ շիւիչ ռուս արդիւնաւետ հանդիպում մը ունեցաւ ռուս պաշտոնատարներուն հետ, որոնց կարգին էր արտաքին գործոց փոխ նախարար Եւրի Ֆետոթով: Հոլմը առանձին տեսակցութիւն մը ունեցաւ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանովի հետ: Հոլմը ըսաւ նաեւ, որ Ռուսիայի կողմէ մօտ օրէն Ապահովութեան խորհուրդին պիտի ներկայացնէ պատժամիջոցները ջնջելու բանաձեւի առաջարկը:

Արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլը իր կարգին հաստատեց, որ այս շաբթուան ընթացքին, Ուաշինկթըն Ապահովութեան խորհուրդին պիտի ներկայացնէ պատժամիջոցները ջնջելու բանաձեւի առաջարկը: Փաուլը աւելցուց, որ Միացեալ Նահանգներ աշխատանք կը տանին, որպէսզի բանաձեւին համաձայնին նաեւ:

Շարք՝ էջ 10

## «ՄԵՐԻՏԻՆ» ՊԱՆԴՈՎԻՆ ՄԵՋ ԴԻՄԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ ԶՕՐԱԿՅԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ



Երէկ, Համրայի «Քոմոտոր-Մէրիտին» պանդոկին մէջ տեղի ունեցաւ քաղաքական ձեռնարկ մը, առ ի գորակցութիւն լիբանանեան դիմադրութեան եւ Սուրիոյ Հեռնարկը կազմակերպած էր լիբանանեան եւ պաղեստինեան կուսակցութեանց համախմբումի ղեկավարներու ժողովին բխած յատուկ յանձնարումը:

Զեռնարկին ներկայ էին երեսփոխաններ, կուսակցութեանց ղեկավարներ, որոնց շարքին՝ Հ. Յ. Դ. Լիբանանի կեդրոնական կոմիտէի պատուիրակութիւն մը, գլխավորութեամբ ներկայացուցիչ ընկ. Յովիկ Մխիթարեանի:

Խօսք առին կուսակցական անձնակազմի ղեկավարներ, որոնք բոլորն ալ չեչտը դրին Լիբանանի Դիմադրութեան եւ Սուրիոյ ներկայութեան, ինչպէս նաեւ անոնց նկատմամբ ժողովրդային ու քաղաքական անվերապահ գորակցութեան անհրաժեշտութեան վրայ:



### ՇՈՒՇԻԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Շուշիի ապստամբները իր արժանապատի տեղը ունի հայ ապստամբների պատմության մեջ: Յեղի մարտունակության այդ հերթական է ապստամբ դրսևորման՝ Արցախեան գոյամարտի դիպաշարին մեջ Շուշիի հայացուները կ'առանձնանայ իր թելադրականությանը, եւ իբրեւ այդպիսին իր տիրական երանգը կը սփռէ Արցախեան պայքարի ամբողջության վրայ, յատուկ դիմագիծ տալով անոր, դառնալով անոր պատգամին ամենահարապատ խորհրդանշելը:


Յատկապէս ռազմական առումով ուսանելի իրիպիսում մըն էր բարձրադիր Շուշիի ապստամբները: Ստեփանակերտի եւ համարեա՝ ամբողջ շրջակայքի պատուհասը դարձած հայկական երբեմնի արժուեքոյնը վերածուած էր թշնամիի կարեւոր կրակակէտի մը: Եւ անոր առումն ալ եղաւ իր արժեքին համապատասխան յանդգնութեամբ, հերթականօրէն ապացուցելով, որ հայ վրիժառուի անվրէպ համապարկներուն, նորօրեայ ջանքերուն հետախն արեան հեղուկին դիմաց նորովի կ'իմաստաւորուին ռազմի բոլոր օրէնքները:

Շուշիի մէջ թրքական մահիկը խոնարհեցաւ հայկական թուրին առջեւ, սակայն բեկիչ յաղթանակը արձանագրուեցաւ այլ՝ բազմապատիկ անառիկ դիրքերով, անդնդախոր վիհերով, անանցանելի կամաններով լեցուն մարտադաշտի մը՝ հայու հոգիի իրաքանչիւր հիւլէին մէջ: Շուշիի մէջ ինկած ապստամբների կերպերը իրականութեան մէջ նահատակուեցան դարերու ստրկութեան եւ ստրկամտութեան տապանին տակ հոգեմաշ՝ հայու ոգեղէն ապստամբութեան սիրոյն: Շուշիի բարձունքներուն վրայ ստորակայութեան շղթաներէն կապանքապերծուեցաւ եւ վերականգնեցաւ հայու արժանապատուութիւնը, եւր:

Մայիս 8 փառահեղ մէկ էջն է հայ ժողովուրդի պատմական իրաւունքներուն վերատիրացման ուղղութեամբ մղուող պայքարին, եւ պէտք է ծառայէ իբրեւ ամենօրեայ ներշնչարան եւ ոչ իբրեւ եւր գգուող յիշատակարան:

L. Ա.

### Շ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԻՆՆԵՐՈՒ ԸԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՏՕԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՁԵՆԱՐԿ



ԸԳԿ. ԵՍԱՅԻ ՀԱՎԱՅԵԱՆ

Շ. Յ. Դ. Լիբանանի Պատանեկան Միութիւններու հիմնադրութեան 80ամեակին առիթով, երէկ երեկոյեան ժամը 8:00ին, «Յակոբ Տէր Մելքոնեան» թատերասահին մէջ տեղի ունեցաւ հանդիսութիւն մը, կազմակերպութեամբ Շ. Յ. Դ. Լիբանանի Պատանեկան Միութիւններու Ընդհանուր Վարիչ Մարմինին:

Հանդիսութեան ներկայ էին Շ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ ընկ. Յովիկ Միւրթեան, Կ. Կոմիտէի անդամներ, յարակից միութեանց ներկայացուցիչներ, ընկերներ, պատանիներ եւ համա-



ԸԳԿ. ՍԱՉՈ ՆՈՒԽՈՒՆԵԱՆ

կիրներ:

Լիբանանի, Հայաստանի եւ Շ. Յ. Դ. Գաշնակցութեան քայլերգներու ունկնդրութենէն ետք խօսք առաւ Շ. Յ. Դ. Լիբանանի Պատանեկան Միութիւններու Ընդհանուր Վարիչ Մարմինի ատենապետ ընկ. Սաչօ Նոխուտեան, որ իր խօսքին մէջ շեշտեց, որ Պատանեկան Միութիւնը 112ամեայ Շ. Յ. Դ. Գաշնակցութիւնը ապագային կապող զանազան արիւթի իրականացնելու հայ ժողովուրդին երազները:

Պատանիները որակելով ապագայ դաշնակցականներ, ան կոչ ուղղեց շարունակելու անկախացած մեր հայրենիքին ծառայութիւնը՝ Միացեալ Հայաստանի կերտման տեսլականով:

Օրուան բանախօս ընկ. Եսայի Հաւաքեան իր խօսքին մէջ շեշտեց հայրենիքին, ազգին ու ժողովուրդին ծառայելու անհրաժեշտութիւնը եւ նկատել տուաւ, որ ոչ մէկուն արտօնուած է շեղիլ հայրենիքէն, հայկականութենէն եւ պայքարող հայ ըլլալու հրամայականէն: Անդրադառնալով պատանեկան միութիւններու հիմնադրութեան, ընկերը վեր առաւ միութեանց առաքելութիւնը՝ նկարագրի տէր հայ պատանիի պարտատուութեան ի խնդիր:

Ե. Հաւաքեան ընդգծեց, որ հայ պատանին եւ ընդհանրապէս հայր տարբեր են եւ տարբեր առաքելութիւն ունին այս մոլորակին վրայ: Ան շեշտեց, որ անհրաժեշտ է հայ պատանիին հոգիին ու մտքին մէջ բարձր պահել ֆետայական ոգին:

Խօսքը ուղղելով ապագային, բանախօսը շեշտեց գոյատեւող հայ ժողովուրդին արուստի եւ դիմել տուաւ, որ հակառակ բոլոր արգելքներուն եւ անոր զոյաւտեման սպառնացող մարտահրաւերներուն, նոյնիսկ հակառակ Յեղասպանութեան՝ հայ ժողովուրդը կը շարունակէ իր երթը, իր մէջ բարձր պահելով պայքարի ոգին ու իր պատմութեան, մնացելով ու յուսաւոր ապագային հանդէպ համոզուած:

Գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր, որ ընդգրկեց ամուսն (Գալար Գիլիբեան), նուագ՝ շոխով (Թամար Իսկէնեան) եւ յեղափոխական երգերով ելոյթ ունեցաւ Վիզէն Տիշչեքեան:

Մրահի մուտքին, ցուցադրուած էին պատանեկան միութեանց կողմէ պատրաստուած պատի թերթեր՝ ազգային - յեղափոխական թեմայով, ինչպէս նաեւ՝ ձեռնարկի աշխատանքներ, միեւնոյն թեմայով:

Arabic calligraphy and logos for the newspaper, including 'السفير' and 'الاستقلال'.

Տեղական մամուլը երէկ լուսարձակի տակ առած է Լիբանանի մէջ կատարուած ձերբակալութիւնները, Հըզպալլայի դէմ ծայր առած աներկեան արշաւը, Իրաքի մէջ տեղի ունեցող իրադարձութիւնները:

Թերթերը նաեւ անդրադարձած են պաղեստինեան բռնագրաւեալ հողերուն վրայ շարունակուող իսրայէլեան բռնարարներուն եւ տեղական ու միջազգային տարբեր պարագայներուն:

«Նահար» գրած է, թէ լիբանանեան ապահովական ուժեր մաքսանեն գններու ցանցին առնչուող յաւելեալ անձեր ձերբակալեցին: Այսպիսով Լիբանան յաջողութեամբ կը պակէ ծայրայեղ ահաբեկիչներու դէմ իր պայքարը, նշած է օրաթերթը:

«Սաֆիր»-ի համաձայն, Հասան Նաւարաթի թերթին հետ ունեցած հարցազրոյցին ընթացքին յայտնած է, թէ աներկեան ճնշումները շատ լուրջ են, սակայն անոնք պատճառներ չունեն անհաւատութեան հրաժարելու:

Ահաբեկիչներու ձերբակալութեան մասին «Տիար» նշած է, թէ լիբանանեան բանակի գաղտնի սպասարկութիւնը կը բացայայտէ Միացեալ Նահանգներու դեսպանին դէմ մահափորձ կատարողներու ցանցը:

«Լիուս»-ի համաձայն, վարչապետ Հարիրի Պապատ կ'այցելէ յայտարարելով, որ Հըզպալլայի խնդիրը պէտք է մաս կազմէ ամբողջական համաձայնագրի մը:

Ըստ թերթին, ամերիկացի դեսպանին դէմ մահափորձ կատարողը ձերբակալուեցաւ: Տը Միսթուր կը շեշտէ «Կապուտ Գիծ»-ին մօտ հանդարտութիւնը պահպանելու անհրաժեշտութիւնը:

Իրաքի մէջ տեղի ունեցող վարագոյններուն անդրադառնալով «Մուսաքալ» նշած է, թէ Ռաշիդ կը յայտարարէ, որ Իրաքի մէջ աներկեան ուժերը ձեռք ձգած են կենսաբանական պայքարի տարրալուծարան մը:

Սատամի պատգամը ընդգրկող ձայների վրէժ յայտարարեցաւ եւ Պապայի մէջ քոլեքայէ վարակուած պարագաներու լուրը տուած է «Քիֆահ Արապի» օրաթերթը, որ նաեւ աւելցուցած է, թէ Պրիմըր պաշտօնապէս Իրաքի կառավարիչ նշանակուեցաւ Ռամսէյի տի ենթակայութեան տակ:

«Սաֆիր» գրած է, թէ հիւսիսային Իրաքի մէջ բախումներ տեղի ունեցան արաբներու եւ քիւրտներու միջեւ, իսկ քոլեքայէ սկսաւ բոյն դնել Պապայի մէջ: «Նահար» դիտել կու տայ, թէ աներկեան օրինագիծ մը կը ներկայացուցի ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին, իսկ Պրիմըր նշանակուեցաւ Իրաքի քաղաքացիական վարչապետի կառավարիչ:

Թերթը գրած է, թէ Պուշկ'առկախէ Իրաքի դէմ հաստատուած աներկեան պատժամիջոցները: «Լիուս»-ի, Սատամի մէկ ձայնագրուած պատգամը յայտնուեցաւ եւ Պապայի մէկ պատասխանատուն ձերբակալուեցաւ Քուէյթի մէջ:

Ըստ թերթին, Սուրիա կը հերքէ Իսրայէլի հետ գաղտնի որոնման բանակցութիւն ի խնդիր խաղաղութեան հաստատման:

«Տիար» օրաթերթը իր առաջին էջով գրած է, թէ Շրպաս կը հերքէ, որ գաղտնի բանակցութիւններ տեղի ունեցած են իսրայէլացիներուն հետ: Դամասկոս կը համաձայնի պաղեստինցիներուն կողմէ տրուած որոշումներուն:

Թերթը նշած է, թէ պաղեստինեան իշխանութիւնը Իսրայէլը կ'ամբաստանէ խաղաղութեան քարտէսը ձախողեցնելու յանցանքով:

«Նահար» գրած է, թէ չորս պաղեստինցիներ, որոնց շարքին ծծկեր մանուկ մը սպանուեցան, իսկ Այսրլոզանանի մէջ իրէրական բնակեցման վայրի մը ընդարձակման աշխատանքները կը շարունակուին:

Թերթին համաձայն, Տահլանիներին գործոց նախարար նշանակումը կը վշտացնէ Արաֆաթը, իսկ Պերնսպակնարկութիւն կը կատարէ խաղաղութեան քարտէսը բանալու կառուցութեան:

### ԱՆԱՋՆՈՐԴ ՄՐԲԱԶԱՆԸ ԱՅՅԵԼԵՑ Դ. ՀԱՍՈՒՏԻ ԶԱՆԶԱՊԵՏԱՐԱՆ



Երէկ, Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան, ընկերակցութեամբ Ազգային Զաղաքական Ժողովի անդամներու, այցելեց Պուրճ Համուտի քաղաքապետարան եւ տեսակցութիւն մը ունեցաւ քաղաքապետ Անդրանիկ Մարրիանի եւ քաղաքապետական խորհուրդի անդամներու հետ:

Տեսակցութեան ընթացքին քննարկուեցան Պուրճ Համուտի բարգաւաճման եւ բարեպարհման վերաբերող հարցեր: Յատկապէս արժարծուեցաւ Նորաշէնի Ս. Վարդանանց եկեղեցւոյ կառուցման ամբողջացման անհրաժեշտութիւնը, որուն գծով քաղաքապետութիւնը եւս խոստացաւ բերել իր օժանդակութիւնը:

# FUEL CARDը գործածեցէք



Պենզինի գնման, ինչպէս նաեւ ձեր ինքնաշարժներուն իւղը փոխելու կամ զանոնք լուսալու պարագային: Երբ մագուիս պիտի գնէք, գործածեցէք FUEL CARDը՝ հեռաձայնելով 04 / 715111 - 222 - 333 թիւերուն:

- ▶ MANAR - Տորա
- ▶ ՍՍՐԳԻՍԵԱՆ - Պուրճ Համուտ
- ▶ BASSIL - Տորա, կամուրջի մօտ
- ▶ AKEL եւ BASSIL - Տորա, «Քրետի Լիպանէ»-ի մօտ
- ▶ SPEED - Հանքաշ, Կալէրի Իթթիհատ
- ▶ ՀՍՅՎԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ - «Ալմազա»
- ▶ MALLAH - Անթիլիաս, կաթողիկոսարանի դիմաց
- ▶ MALLAH - Հարեք Ղաուարնէ
- ▶ MALLAH - Պալիմ
- ▶ MALLAH - Ժալ էլ Տիպի մայրուղի
- ▶ CORAL - Էշրեֆիէ, Ս. Յակոբ Եկեղեցւոյ մօտ
- ▶ SAAD - Մար Միսալէլ
- ▶ SPEED - Նահր, «Փէօժօ» ընկերութեան մօտ
- ▶ PHOENICIA - Այնճարի մուտքին
- ▶ MALLAH - Պապատէթ

**ՊԱՏՐԻԱՐԲԱԿԱՆ ՄՐՅԱՆԱԿ**

Այսու կը հաղորդենք, որ ամեն տարի Լիբանանի հայ կաթողիկէ վարժարաններէն մէկական աշակերտի առիթ պիտի տրուի այցելելու Հայաստան, ամառնային արձակուրդի ընթացքին:

Հայ կաթողիկէ պատրիարքարանի հովանաւորութեամբ, աշակերտներու ընտրութիւնը պիտի կատարուի մրցութային կարգով, որ կը իմնուի հայերէն լեզուի եւ հայոց պատմութեան անոնց իմացութեան վրայ:

Սոյն նախաձեռնութիւնը կը միտի զարգացնել լիբանանահայ Սոր սերունդին յարաբերութիւնները Մայր հայրենիքին ու հայրենաբնակ երիտասարդութեան հետ, ինչպէս նաեւ քաջալերել մեր աշակերտները՝ առաւել ուշադրութեան արժանացնելու հայագիտական նիւթերը:

ՏՆՕՐԵՆՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴ ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՎԱՐՃԱՐԱՆՆԵՐՈՒ Պէրթոս, 5 Մայիս 2003

**«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ» ԿԱՐԻՔԸ ՈՒՆԻ ՀՆԱՂՈՐԴԱՎԱՐՆԵՐՈՒ**

«Վանայ Զայն» կարիքը ունի հաղորդակարներու՝ արական եւ իգական, որոնք պէտք է ունենան խօսակցական ձիւղ հայերէնի ընդունելի մակարդակ:

Անոնք, որոնք հետաքրքրուած են, պարտին անձամբ դիմել «Վանայ Զայն»:




# 11 ԱՄԵԱԿ՝ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ

11 տարի կ'անցնի ահալապի այն օրը, երբ հայ ժողովուրդը առաւ անվերադարձ քայլ մը, որ հետզհետեւ հունաւորեց մեր պատմութիւնը եւ կազմաւորեց Հայաստանի քաղաքական նկարագիրը:

Ազրպէյճանի լուծին տակ, հրէշի մը կողմէ կամայականօրէն անոր շնորհուած Արցախի մեր արծուները՝ Շուշին, որուն ռազմագիտական արժէքը շատ լաւ ըմբռնած է մեր ժողովուրդը, 1992 Մայիս 9ին միանգամընդմիջ ազատագրուեցաւ եւ շնչեց ազատ երկինքի տակ, իր Եռագոյնով, իսկ այսօր իր սեփական դրօշով է պաշտօնական անուանուումով՝ Լեռնային Ղարաբաղի համրապետութիւն:

Փառք Շուշին ազատագրած մեր անմահ ազատամարտիկներուն, բիրտ յարգանք անոր ազատագրութեան ճամբուն վրայ ինկած մեր սրբազան նահատակներուն: Անոնք իրենց կեանքին գնով, վճռականօրէն ո՛չ միայն փշրեցին ստորակայութեան բոլոր շղթաները, այլեւ՝ պատգամեցին հետեւելու: Շուշին յստակ հայելի՛ն՝ ու բռնագրաւուած մեր բոլոր հողերուն ազատագրութեան ի խնդիր:




## ԾԱԳՈՒՄ, ԴԻՐՔ ԵՒ ԿԱՌՈՒՅՈՒԱԾՔ

Միջնադարուն Շուշին ծանօթ եղած է իբրև Շոշ գիւղին ամրոցը:

9 - 18րդ դարեր ան եղած է Արցախի իշխաններուն գլխաւոր յենակէտը:

Շուշին երբեք կողմէն չըջապատուած է անդնդախոր կիրճերով՝ արեւելքէն պաշտպանուած է պարիսպով: Քաղաքը կը յատկանշուի ընակաւ միաձոյլ անառիկութեամբ: Աշխարհագրական բացառիկ դիրքին պատճառաւ, հակառակ շարունակական յարձակումներու ենթարկուած ըլլալու իրողութեան, միշտ մնացած է անառիկ: Շուշին մանաւանդ անառիկ է հարաւային կողմէն: Այդ կողմէն Բերդաքաղաք մտնել փորձող թշնամին պարտաւորուած պիտի ըլլայ մտնելու կարկառ գետի կիրճը, ուր շատ դիւրութեամբ կը չէ գոքացել թշնամին նաեւ ստիպուած պիտի ըլլայ բարձրանալու ուղղաձիգ, շատ բարձր եւ պատի նման ժայռերէն, ինչ որ անհնարին է: Ժայռայտը այնքան բարձր է, որ դիտողին վրայ կը ձգէ ահաւոր ազդեցութիւն: Անկէ դիտուած՝ Կարկառի կիրճին մէջ մարդը հազիւ նշմարելի կ'ըլլայ, իսկ կարկառ գետը կ'երեւի ժայռէն տեսքով: Ամրոցը անառիկ է նոյնպէս արեւմտեան եւ հիւսիսային կողմերէն: Հարաւարեւելեան կողմէն եւս անառիկ է, խոցելի է հիւսիսարեւելեան բաժինը: Շուշին մանաւանդ անառիկ մնացած է, երբ պաշտպանուած է հայերուն կողմէ: Շուշին պաշտպանական յենակէտներէն էր Փոքր Սղնախ ամրութիւնը, որուն հիմնական յենակէտը կը կազմէր Քարինտակ գիւղը:



Շուշին ռազմաքաղաքական կարեւոր դեր ունեցած է ոչ միայն Ղարաբաղի պաշտպանութեան, այլեւ ընդհանրապէս Անդրկովկասի քաղաքական կեանքին մէջ: Անդրկովկասի մէջ հաստատուած օտար ուժեր (Պարսկաստան, Ռուսիա) Շուշին ընտրած են իբրև իրենց... գինուորական խարխիւր: Ղարաբաղի քաղաքական կարգապահը պատմութեան ընթացքին մեծապէս կախեալ եղած է ամրոցին համար մղուած պայքարի արդիւնքէն: Այնքան ատեն որ կանգուն մնացած է Շուշին, կարելի չէ խօսիլ Ղարաբաղի եւ ոչ միայն Ղարաբաղի, այլ նաեւ Արարատեան դաշտի նուաճման մասին:

Շուշին պարտադրարար կը կատարէր հայակործան այն դերը Արցախի նկատմամբ, ինչ որ նախապէս կ'ընէին հայութեան թշնամիները: Շուշի, բաց դաշտի մէջ փռուած Ստեփանակերտը շատ հեշտութեամբ կը պահէ «կրատ» հրթիռներու մահասփեռ տարափին տակ: Մայիսի (1992) առաջին շաբաթը դժնդակ ու արեւնալի կ'ըլլայ Ստեփանակերտի համար: Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան մայրաքաղաքը ու հարաւարեւմտեան թաղամասերը սաստիկ կըրակոցներու եւ հրթիռարձակման կ'ենթարկուին Շուշիէն եւ Ջանհասանէն: Ջանհասանէն՝ յարձակում, Շուշիէն՝ հրթիռակոծում: Նոյն ատեն Քէօսալարի դիրքերէն ազերիներ «կրատ» հրթիռներ կը տեղացնեն մայրաքաղաքի տարբեր շրջաններուն վրայ՝ առօրեայ հերթականութեամբ պատճառ դառնալով բազմաթիւ անմեղ զոհերու: Փետրուարէն սկսեալ մայրաքաղաքը ցերեկները կը պարզէ անմարդաբնակ երեւոյթ: Բնակչութիւնը իր օրը կ'անցընէ ապաստանարաններու մէջ, իսկ գիշերը կը լծուի առօրեայ տարրական պահանջներու բաւարարման գոռոշ աշխատանքին:

Շուշիի ազատագրութիւնը Արցախի ազատագրական պայքարի համար հրամայական էր: Ատիկա երազն էր մանաւանդ Արթուր Մկրտչեանի, որ սակայն անժամանակ կը մահանար 14 Ապրիլ 1992ին: Մայիսի առաջին օրերուն Արցախի հրամանատարութիւնը, ինչպէս նաեւ քաղաքական ղեկավարութիւնը, կը գումարէ անընդմէջ ժողով-

## ...ՇՈՒՇԻԻ ԳՐԱՒՄԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ...ԴԺՈՒԱՐ ՕՐԵՐ ԵՆ



ներ՝ քննարկելով ռազմամթերքի կապուած հարցերն ու քաղաքական կացութիւնը: Զինուորական հրամանատարութեան որոշումը յստակ է. վերջնականապէս լուծելու Շուշիէն մայրաքաղաքին սպառնացող թնդանօթներու եւ «կրատ»ներու վտանգը՝ յարձակումով մը ոչնչացրելով գանդը:

## ՇՈՒՇԻԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Մայիս 8ի առաւօտեան ժամը երկու ժողովներ հայկական հրետանին կը սկսի Շուշիի անընդմէջ եւ ճշգրիտ ուժերակոծման: Միաժամանակ Աշոտ-Բեկորի գլխաւորութեամբ Դանակցութեան Զոհատը Շոշ գիւղէն կ'իջնէ ձոր եւ մագլցելով Շուշիի բարձունքը՝ անակնկալօրէն կը յարձակի ազերիական ուժերուն վրայ եւ կը ստեղծէ ընդհանուր խուճապ ու կը կոտորէ թշնամիին դիմադրութիւնը:

Գրոհի ընթացքին անհատական մեծ խիզախութիւն կը ցուցաբերէ Աշոտ-Բեկորը, որ կարելի է նկատել այս յաջողութեան գլխաւոր կերտիչը:

Միւս կողմէ, հայկական հրատարակը եւ 4րդ վաշտը, յառաջապահ ունենալով այլ դասակներ, Ստեփանակերտ-Շուշի մայր ճանապարհէն կուռելով կը բարձրանան դէպի Շուշի: Հայկական հրատարակը կը հանդիպին ազերիական հրատարակին դիմադրութեան, որ կը չէ գոքացուի հայկական հրետանիի ճշգրիտ ուժերակոծմով:

Այս յարձակման ընթացքին ուղղակի յարձակման կ'ենթարկուի հայկական հրատարակը, որուն անձնակազմին երկու անդամներ կը զոհուին:

Պէտք է նշել, որ Շուշիի գործողութեան ընթացքին աչքի կ'իյնայ կապի եւ հաղորդակցութեան համակարգը՝ յարձակողներուն եւ հրամանատարութեան միջեւ:

Շուշիի գործողութեան ժամանակ Արցախի ուժերու գլխաւոր հրամանատարն էր Արկադի Տէր Թադեոսեան (ծանօթ՝ Քոմանտոս անուանով), որ գործողութեան ընթացքին կը հսկէ Շուշիի հանդիպակաց լանջին վրայ գտնուող իր հրամանատարական դիրքէն:

### ՋԱՆՀԱՍԱՆԻ ԵՒ ՔԵՕՍԱԼԱՐԻ ԾԱԿԱՏՆԵՐԸ...

Ազատամարտիկներու ուշադրութիւնն ու գինուորական կեզրոնացումները ցրուելու յստակ մտադրութեամբ, ազերիները կը բռնկեցընեն Ասկերանի ճակատը:

Թշնամիին յառաջացեալ դիրքերուն մօտ, դէպի Ջանհասան ուղղուող ազատամարտիկներու խումբը կ'ենթարկուի անակնկալ պաշարման օղակի: Ազերիները կ'օգտագործեն հրատարակը եւ զրահապատ մը: Տեղի կ'ունենան կատաղի կռիւներ, որոնք նոր թափ կը ստանան Քէօսալարէն հայ ազատամարտիկներու օգնութեամբ: Կը կազմակերպուի արագ եւ ազոռ յարձակողական, որուն ընթացքին կը զբաւուրի հարիւր մմ. հրթիռարձակները, որոնք ամիսներ շարունակ կը ուժերակոծէին Բալուջան եւ Ստեփանակերտը:

Դէպի Քէօսալար ուղղուող խումբին տարբեր ճակատագիր չի վիճակուիր: Ազերիները հոս եւս կը դիմեն դարանակալ պաշարումի իրենց թաքթիքին: Կը փճացուի ազերիական հրատարակը եւ զրահապատ մը: Կ'իյնան բազմաթիւ նահատակներ եւ տասնեակ մը վիրաւորներ:

Առաւօտեան ժամը 10:00ին, յարձակման ազդանշանէն ժամ մը ետք, Ջանհասանն ու Քէօսալարը կ'ենթարկուին հայ ազատամարտիկներ-

րուն գերիշխանութեան: Ջանհասանի մէջ կը փճացուի «կրատ» խարխիւ մը:

Շուշիէն մինչեւ Արցախի բաց դարպասները ամրոցական Հայաստանի ճամբուն վրայ:

Շուշիի ազատագրումէն ետք Ստեփանակերտ կը փրկուէր, ազերիական անմիջական վտանգէն, ուժերու պատուհասէն, սակայն Արցախի պաշարման օղակը ամրոցական տակաւին չէր քանդուած, այնքան ատեն որ փակուած կը մնար Արցախը Հայաստանին կապող ցամաքային ճամբան: Անդին Ազրպէյճան դարձանելու համար Շուշիի կորուստը լայնածաւալ յարձակումներ կը շղթայագրեթէ Շահումեանէն Մարտակերտ, Մարտակերտէն Ասկերան եւ Հաղրուժ միաժամանակ, Ստեփանակերտի մէջ կը հանէ, առաջին անգամ ըլլալով, իր օրոժոր 9, 9 Մայիս 0:

Շուշիէն ճամբայ ելած Արցախի ինքնապաշտպանութեան ուժերը,

նաեւ ազատամարտիկներու ջոկատները առանց դադար առնելու յաջորդաբար ազատագրել է ետք Զառիսուր-Լիսազոր-Բերդաձորի հայկական հիւղերը, կը մտնեն Լաչին (18 Մայիս) եւ Արցախը Հայաստանին կը միացնեն ցամաքային ամէնէն կարճ անցքով Լաչինի միջանցքով, որ կեանքի դուռի նշանակութիւն կ'ունենայ պաշարուած Արցախի համար:

Մայիսի առաջին շաբաթը Ստեփանակերտէն ճամբայ ելած ԼՂՀի պաշտպանական ուժերը Շուշին ազատագրելէ ետք կը շարունակեն իրենց յառաջադրանքը դէպի Լաչին: Տարբեր ընթացքին անոնք կ'ազատագրեն Շուշիէն Գորիս տարածուող հայրենի բնակավայրերը, եւ ցամաքի ճամբով Արցախը կը միացնեն Հայաստանին:

Շուշիի ազատագրումէն մօտաւորապէս շաբաթ մը ետք Զառիսուրի մէջ տեղի կ'ունենան բուռն մարտեր, որոնք կը շարունակուին Լիսազորի մէջ: Ազատամարտիկները Ջանհասան-Լիսազորը ազատագրելէ ետք կ'ուղղուին դէպի Բերդաձոր:

Ազատամարտիկներու յառաջադրանքը առջեւէն խնկարոյս կը փախչին թուրքերը: Բերդաձորը կ'ազատագրուի Հ. Յ. Գ. վաշտին կողմէ Մայիս 17ին:

Շուշիի գրաւումէն շաբաթ մը ետք Բերդաձորի ազատագրումով, Ստեփանակերտ-Շուշի-Լաչին ցամաքային գիծի հսկողութիւնը անցած կ'ըլլայ Արցախի հայկական հանրապետութեան հակաչինքին տակ: Բերդաձորէն ետք յառաջադրանքը կը շարունակուի երկու ուղղութիւններով՝ Բերդաձոր-Լաչին, Բերդաձոր-Ղուբաթի (դէպի հարաւ Արաքս գետ, պարսկական սահման) Լաչինէն ու Զառուղ գիւղէն փախուստ տուող պարսկական զինեալները կը պայթեցնեն Գորիս-Ստեփանակերտ մայրուղիի կամուրջը: Բերդաձորէն Լաչին յառաջացող Լաչին կը մտնեն հետիոտն:



ԳԵՊԻ ԼԱՉԻՆ... Մայիսի առաջին շաբաթը Ստեփանակերտէն ճամբայ ելած ԼՂՀի պաշտպանական ուժերը Շուշին ազատագրելէ ետք կը շարունակեն իրենց յառաջադրանքը դէպի Լաչին: Տարբեր ընթացքին անոնք կ'ազատագրեն Շուշիէն Գորիս տարածուող հայրենի բնակավայրերը, եւ ցամաքի ճամբով Արցախը կը միացնեն Հայաստանին:



# ՈՎ ՏԻՐՈՒՄ Է ՇՈՒՇԻԻՆ, ՆԱ ՏԻՐՈՒՄ Է ԱՐՑԱԽԻՆ

# 7րդ Արուեստ



## ԲԵՄԱԴՐԻՉ ԴԵՐԱՍԱՆՆԵՐ

Անցնող ամիսներուն շարժապատկերի աշխարհը տեղ բացաւ մէկէ աւելի աշխարհաճաշակ դերասաններու բեմադրական անդրանիկ փորձերուն, որոնք արդարացեցին իրենց շուրջ աղմուկ եւ հետաքրքրութիւն յառաջանելու ակընկալութիւնները:

Նոր եւ աննախագէտ երեւոյթ չէ դերասաններու բեմադրիչ դառնալը: Շարժապատկերի աշխարհի իւրաքանչիւր տասնամեակ ի յայտ բերած է նշանաւոր դերասաններու բեմադրական շնորհները: Ուորըն Պիթի, Շոն Փեննի, Ռոպըրթ Ռեյնֆորտի, Թոմ Հէյնքսի, Փոլ Նիւմանի եւ Ժիւստի Ֆոսթըրի անունները օրինակներ են անոնց խումբին: Սակայն, ինչպէս «Ինթընէշնըլ Զեբըլտ Թրիպիոն» օրաթերթը կը նշէ, շարժապատկերի աշխարհին մէջ միշտ ալ կարեւոր իրադարձութիւն է, երբ ծորճ Քլունի, Տենզըլ Ուաշինկթընի եւ Նիքըլըս Քէյճի նման առաջին կարգի դերասաններ կ'անցնին քամերաներու ետին: «Ինթընէշնըլ Զեբըլտ Թրիպիոն» թերթը հետեւեալ ձեւով կ'անդրադառնայ այս երեւոյթին. «Բնականաբար շարժապատկերի աստղի մը իւրաքանչիւր արարքը պէտք է նկատուի կարեւոր իրադարձութիւն մը. այս իրողութիւնը կրնայ հաստատուի Ամերիկայի որեւէ օդանաւի վրայ, «Եւր. Էս. Ուիլի» շարժապատկերին մի-

ջոցով: Սակայն հանրային ասպարէզներու մէջ այսպիսի յանկարծական փոփոխութիւններ յաճախ առիթ կու տան հարցումի մը: Ժողովրդական ժամանցի աշխարհին մէջ մակընթացութիւն յառաջանող աստղային մարմին մը ըլլալը բաւարար չէ՞ արդեօք: Կամ, այլ խօսքով, ի՞նչ է իրենց շարժապատկերը:

Միտնի Փոլաքը նաև մեծ աստղ մը չէր, սակայն ան եւս դերասանութենէ բեմադրութիւն ցատկեց՝ օգտագործելով իր փորձառութեան շնորհիւ դերասանական կազմերուն նեցուկ կանգնելու եւ անոնց մտածելու նիւթ հայթայթելու իր կարողութիւնը: Սակայն նոյնիսկ հոս մեծ ուշադրութիւն չ'ընծայուիր այն հարցին, թէ ի՞նչն է, որ կը մղէ դերասանները անցնելու քամերաներու ետին: Բեմադրիչ մը, որ չի սերլըր դերասաններու դասակարգէն, կու տայ հետեւեալ վարկաբեկիչ տեսակէտը: Անոր համաձայն, դերասանները բեմադրիչ կ'ըլլան պարզապէս մղուելով իրենց եասիրութենէն: Անոնք կը մտածեն, թէ իրենք աշխարհի ամէնէն ազդեցիկ անձերն են, սակայն կան իրենցմէ աւելի ազդեցիկները: Ի՞նչպէս կրնան անոնց ուժին հասնիլ: Պատասխանը բեմադրիչ ըլլայն է՝:

Սակայն թերթը անմիջապէս կ'աւելցնէ, որ այս բացատրութիւնը չի վերաբերիր Նիքըլըս



Քէյճի, ծորճ Քլունիի եւ Տենզըլ Ուաշինկթընի անցեալ տարի բեմադրած ժապաւէններուն, որոնք, նախանձի արտայայտութենէ աւելի, կը թուին ըլլալ սիրոյ պտուղներ: «Նիքըլըս Քէյճին բեմադրած «Մաննի», ծորճ Քլունիի «Քոնֆեշնըլ աֆ Է տէյնըրըս մայնտ» եւ Տենզըլ Ուաշինկթընի «Էնթրուս ֆիլըր» ժապաւէնները հրապարակուեցան 2002ի աւարտին, երբ ցրուիչ ընկերութիւնները հող կը պատրաստեն կարեւորագոյն մրցանակաբաշխութիւններուն ներկա-

յանալիք ժապաւէններուն համար: Հետեւաբար «Էնթրուս ֆիլըր» Զեբըլտ Թրիպիոն» կ'առաջադրէ այլ տեսութիւն մը: «Թերեւս ժապաւէն մը բեմադրելը դերասանի մը համար պարզապէս այլ բան փորձել է: «Էնթրուս ֆիլըր» ժապաւէնը ունի այն հանդարտ մթնոլորտը, որ կը պակսի Տենզըլ Ուաշինկթընի մարմնաւորած բիրտ կերպարները պատկերող ժապաւէններէն: Քլունիի «Քոնֆեշնըլ աֆ Է տէյնըրըս մայնտ» օգտագործած է պատտաւ բարձրացնելու համար քաղաքական արեւելում ունեցող ժապաւէն մը: Իսկ Նիքըլըս Քէյճի «Մաննի» կը յիշեցնէ այն սահմանափակ պիւտճէով ժապաւէնները, որոնցմով ան սկսաւ իր դերասանական ասպարէզին»:

Բեմադրութեան դիմող դերասաններու երեւոյթին վերլուծումը շարունակելով՝ «Ինթընէշնըլ Զեբըլտ Թրիպիոն» կը բացատրէ, թէ աստղերը յաճախ բեմադրութեան կը դիմեն իրենց ասպարէզին տոմսակներու վաճառքի լաւագոյն ժամանակաշրջանին, թերեւս առաջը առնելով անոր անկումին: Իսկ բեմադրիչներուն կողմէ նոր ու անփորձ դերասաններու վստահուած գլխաւոր դերերուն անդրադառնալով՝ օրաթերթը կ'ըզրկուի ասպարէզէն: «Իրրեւ բեմադրիչներ, Քէյճի, Քլունիի եւ Ուաշինկթընի առիթ կու տան աւելի երիտասարդ դերասաններու հետաքրքրութիւն ստեղծելու մեծ պատասխան վրայ, այնպէս՝ ինչպէս իրենք ժամանակին ըրին: Անոնց շարժապատկեր կը թուի, նախանձէ աւելի, առատաձեռնութիւն ըլլալ»:

### Նոր ժապաւէններ

**«ՀԱՌԻ ԹՈՒ ԼՈՒՉ Է ԿԱՅ ԻՆ ԹԵՆ ՏԵՅՉ»**  
**Բեմադրիչ՝ ՏՄՆԵԼՏ ՓԵԹՐԻ**

Մինչ դասական վիպային կատակերգութիւններուն հերոսութիւնները տարբեր միջոցներու կը դիմեն որսալու համար իրենց հերոսներուն սիրտը, «Հաու թու լուգ Է կայ ին Թէն Տէյճ» գլխաւոր հերոսութիւն (Քէյթ Հատսըն) անպայման պէտք է տասը օրու մէջ բաժնուի իր սիրահարէն: Ինչ ու որպէսզի աւարտէ ծախողոյ յարաբերութիւններու մասին յօգուած մը: Անոր ի գործ դրած միջոցները շատ դիւրութեամբ պիտի վանկին որեւէ սիրահար, սակայն դժբախտաբար ժապաւէնին հերոսը իր կարգին պէտք է տասը օրու մէջ որեւէ աղջկան սիրտը գրաւէ շահելու համար գործի գրաւ մը:

Դերասաններուն համակրելի գոյակցութեան շատ բան շահող վիպային կատակերգութիւն մըն է այս մէկը, որ սակայն կրնայ միանալ անմիջապէս մոռցուող նմանօրինակ ժապաւէններու շարքին:

**«ԷՔՍ - ՄԵՆ 2»**  
**Բեմադրիչ՝ ՊՐԱՅԸՆ ՍԻՆԿԸՐ**

2000ին լոյս տեսած առաջին «Էքս. - մէն» ժապաւէնին յաջորդած այս երկրորդ գործը դարձեալ կը ներկայացնէ այլափոխուած մարդոց ընկերութիւնը, որ կը փորձէ իր տեղը ունենալ սովորական մարդոց ընկերութեան մէջ: Այլափոխուած մարդոց յատուկ դպրոցի մը մէջ հաւաքուած երեսներուն վրայ Սի. Այ. Էյ.էն յար-

դոց տեղը եւ պատճառել անոնց հաւաքական ոչնչացումը: Արկածախնդրական, մասնաշաղկապ զոհեցուցիչներով հարուստ է իրրեւ գիտաբերական ժապաւէն իր տեսակին մէջ յաջող ժապաւէն մըն է «Էքս. մէն 2»: Նշենք, որ ժապաւէնին մէջ դեր ստանձնած են Հէյ Պերի, Հիւ Ճեքմէն, Ռեպեքա Ռոմիկոն Սթաւոս, Աննա Փեթրի, Փեթրի Սթիւարթ, Ճէյմս Մարտին եւ ուրիշներ:

**«ՈՒԵԼՔԱՎ ԹՈՒ ՔՈԼԻՆՎՈՒՏ»**  
**Բեմադրիչ՝ ՍՈՒՎԸՆ ՍՈՍԵՐՊԸՐԿ**

Մահաճախակ պիտուելով, սակայն հանդիսատեսներուն մօտ յաջողութիւն գտնող ժապաւէն մըն է «Ուելքամ Թու Քոլինվուտ», որ ամերիկեան վերարտադրութիւնն է 1950ական թուականներու իտալական կատակերգութեան մը: Սրամիտ խօսակցութեամբ, ծիծաղաշարժ կացութիւններով եւ մանաւանդ ծաղրակարային կերպարներով այս ժապաւէնը կը պատմէ գողութեան մը շատ պարզ պատմութիւնը, որ սակայն կը բաղկանայ շնորհիւ հիզր գողներուն անհարկութեան: Բանտարկեալ մը գանձ մը գողնալու համար կ'ուզէ գինք փոխարինող բանտարկեալ մը գտնել: Այս վերջինը սակայն գողնալէ ետք գանձին գաղտնիքը, դուրս կ'ելլէ բանտէն եւ իր հինգ ընկերներուն հետ կը սկսի գողութեան պատրաստուիլ:

Միամիտ, պարզունակ, սակայն միաժամանակ սրամիտ այս ժապաւէնին մէջ դեր ստանձնած են Ճորճ Քլունի, Սեմ Ռոքուել, Փեթրիսիա Քլեյքսթըն, Լուիս Կուրմըն եւ ուրիշներ:

**«ՏԸ ՇԻՓԻՆԿ ՆԻՌՈՒՉ»**  
**Բեմադրիչ՝ ԼԱՍ ՀԱՍՏՐՈՍ**

Զգացական տոգոսպներու ենթարկուած ամուսին մը իր աղջընակին հետ կը մեկնի Նոր Զելանտա՝ իր հայրենիքը, նոր կեանք մը սկսելու հետեւ կարգերով: Տեղական օրաթերթին մէջ անոր սիւնակը «Տը շիփինկ Նիւզ» մեծ ժողովրդականութիւն կը գտնէ եւ անոր կեանքը կը սկսի բարեյայտը ընթանալ, մանաւանդ երբ ան կը բարեկամանայ երիտասարդ եւ գեղեցիկ այրիի մը: Յատկանշական է, որ այս տրաման մեծ պատասա կը հանէ մեծ թիւով նշանաւոր դերասաններ, ինչպէս՝ Քեյթլին Սիլվեստրի, Ժիւլիէն Մուր, Ճիւստի Տենց եւ Քէյթ Պլանշէր:

**«ՏԱՐԸՆԵՍ ՅՈՒՉ»**  
**Բեմադրիչ՝ ՃՈՆԸԹԸՆ ԼԻՊԵՍՍՆԸ**

Սարսափագրու այս թրիլլըրը կը ներկայացնէ 150 տարի ետք իր բնակած քաղաքը վերադարձող եւ վրէժխնդրական նպատակներ ունեցող ոգիի մը պատմութիւնը: Քաղաքին վրայ իր սեւ շուրջ տարածող այս ոգին կը սարսափեցնէ բնակիչները եւ մանաւանդ խումբ մը պատանիներ, որոնք կը փորձեն պայքարիլ անոր ազդեցութիւններուն դէմ:



ձակում մը լարուած բնոյթ կու տայ այս երկու ուժերուն միջեւ թարուն պայքարին: Միւս կողմէ, այլափոխուած մարդոց մասնագետ մը կը ջանայ նշող աշխարհի տարածքին այլափոխուած մար-

### ԺԱՊԱՒԵՆՆԵՐ - ԿԱՐԾԻՔ

- «ՏԸ ՇԻՓԻՆԿ ՆԻՌՈՒՉ» (Փլանք / Ընդգրտ, Ապրիլ, Ֆրիլի, Չուք)
- «ՈՒԵԼՔԱՎ ԹՈՒ ԵՈԼԻՆՎՈՒՏ» (Փլանք / Ընդգրտ, Ֆրիլի, Ապրիլ, Չուք, Թրիպիոն)
- «ԹԱՔՄԻ 3» (Փլանք / Ընդգրտ, Ֆրիլի, Ապրիլ, Չուք, Թրիպիոն)
- «ՀԱՌԻ ԹՈՒ ԼՈՒՉ Է ԿԱՅ ԻՆ ԹԵՆ ՏԵՅՉ» (Փլանք / Չուք, Ապրիլ, Ընդգրտ, Ֆրիլի, Թրիպիոն, Ամիլի/Սոֆի)
- «ՏԸ ՃԱՆԿԸ ՊՈՒՔ 2» (Փլանք/Ընդգրտ, Ապրիլ, Ֆրիլի, Չուք)
- «ԷՔՍ - ՄԵՆ 2» (Ամիլի / Տիւն, Եսփաս, Սեթ Էլի, Սոտեք, Սթալու 2001, Լաս Սալինաս, Կալաքսի, Սթարկէյթ)
- «ՃԱՍԹ ՄԵՐԻՏ» (Ամիլի / Տիւն, Եսփաս, Սեթ Էլի, Սոտեք, Սթալու 2001, Լաս Սալինաս, Կալաքսի)
- «ՏԱՐԸՆԵՍ ՅՈՒՉ» (Ամիլի / Տիւն, Եսփաս, Սեթ Էլի, Սոտեք, Սթալու 2001, Լաս Սալինաս, Կալաքսի)
- «ՏԸ ՖՈՐ ՖԵՏԸՐՉ» (Փլանք/Ընդգրտ, Ապրիլ, Չուք, Ֆրիլի, Թրիպիոն)
- «ԿՈՍՄՈ ՇԻՓ» (Ամիլի / Տիւն, Եսփաս, Սթալու 2001, Լաս Սալինաս, Կալաքսի)
- «ՓԻՆՈՒԹՈ» (Փլանք / Ընդգրտ, Ապրիլ, Ֆրիլի, Չուք, Թրիպիոն)
- «ՖԱՐ ՏԵՆ ԿԵԿԸՆ» (Ամիլի / Սոֆի)
- «ՃՈՆԻ ԻՆԿԼԻՇ» (Ամիլի / Սոֆի, Փլանք / Ֆրիլի, Եսփաս, Ապրիլ)
- «ԹՈՒ ՈՒԻԷՉ ՆՈՒԹՄԱՆ» (Ամիլի, Եսփաս, Սթալու 2001, Կալաքսի, Սթարկէյթ)
- «ՏԸ ԸՈՐ» (Փլանք / Ապրիլ, Չուք, Ֆրիլի, Թրիպիոն)
- «ՏԸ ՌԵՐՈՒԻԹ» (Փլանք / Ապրիլ, Չուք, Ընդգրտ)
- «ՖՐԻՏԱ» (Փլանք / Ապրիլ, Չուք, Ընդգրտ)
- «ՏԵՐՏԵԿԸՆ» (Ամիլի, Սոտեք)
- «ՍԱՍՈՒՐԱՅՉ» (Փլանք / Ապրիլ, Թրիպիոն, Չուք)
- «ՏԻ ԱՈՒԸՐՉ» (Փլանք / Ապրիլ, Ընդգրտ, Ընդգրտ)
- «ՄԵՅՏ ԻՆ ՍԵՆԵԹԸՆ» (Ամիլի / Կալաքսի)
- «ՇԻՔԱԿՈ» (Փլանք / Ապրիլ, Ընդգրտ)

### Պատրաստեց՝ Պ. ՓԱՆՈՍԵԱՆ

**ԿԱՐՉՈՒ ԿԱՍ**  
**ՇԱԽՈՒ ԸԱՊԻՆ**  
 ● Թապառժա Պիլի մէջ:  
 Հեռ. 03/881699 եւ 01/248772:

«ԱԶԳԱԿ»-ի  
 ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ  
 «ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնել  
 հետևեալ թիւերուն: - 258526, 260115 եւ 241274:

**«ԿԱՆԱՅ ԶԱՅՆ» ԵՆ ՅԱՅՏԱԳԻՐ՝**  
**ՃԵՅՍՍ ՄԻԼՈՐԻ ՅԻՇԱՍԱԿԻՆ**

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ**  
**ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**  
**ՃԱՇԱՆ ՃԱՇՆՈՒՐ**  
**ՇՆՆԴԵԱՆ 100ԱՄԵԱԿ**  
 Կը բանախօսեն  
**ՄԱՐՈՒՅ ԵՐԱՄԵԱՆ**  
 ԵՆ  
**ԳՐԻԳՈՐ ՃԱՇՆԵԱՆ**  
 ● Գեղարուեստական յայտագիր  
 Տեղի կ'ունենայ Կիրակի, 11 Մայիս 2003, առաւօտեան ժամը 11:30ին, «Յ. Տր Մելքոնեան» թատերասրահին մէջ:  
**ՏՐԱԿԵՐ**

**"ARMENIA: THE BETRAYED"** ժապաւէնի արտադրիչ, քրիտանացի ակադեմիկոս յրազող **ՃԵՅՍՍ ՄԻԼՈՐ** Ուրբաթ, 2 Մայիսին գոհ գնաց խորալուեան ուժերուն կողմէ արձակուած փանփուշտին, մինչ իր պարտականութիւնը կը կատարել Ուֆա-հի մէջ:  
 «Կանայ Զայնեմ», իբրեւ հոգիի պարտը Հայկական Յեղափոխութեան ձանձախ առաջնորդներուն իր կարեւոր նպաստը բերած **ՃԵՅՍՍ ՄԻԼՈՐ**ի, պիտի ձայնասփռուի յայտագիր մը, Ուրբաթ, 9 Մայիս 2003, առաւօտեան ժամը 11:00ին:  
**www.aztagdaily.com**

**ՍՐՔՈՑ ՀՈՒՓՈՒՄԵՆՆԵՐ ՎԱՐՇԱՐԱՆ**

2003 - 2004 ՏԱՐԵՇՐԶԱՆԻ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Տնօրէնութիւնս բաց կը յայտարարէ 2003-2004 դպրոցական տարեշրջանի արձանագրութիւնները, 5 Մայիս 2003էն սկսեալ ամէն օր առաւօտեան ժամը 8:00էն 14:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:

Դիւրացնելու համար վերամուտի գրասենեակի աշխատանքները՝ արձանագրութիւնը պարտադիր է ներկայ աշակերտութեան, անհրաժեշտօրէն:

Հայ դպրոցը տունն է հայ գաւկիմ, ուր՝ մօրը կաթին նման, կը սնանի հայ ոգիով, կը ստանայ աւելը իր հայեցի պատկանելիութեան եւ կը ոգնայ չորս լեզուներով զարգացած, ապագայի օգտաշատ հայ, քրիտանացի, տիպար քաղաքացի:

Նորեկ աշակերտները պարտին իրենց հետ բերել ինքնուրուած թուղթի լուսապատճէն կամ *կիտաժ քայտ*, մկրտութեան վաւերագիր, պատասխաններու եւ առողջ վիճակի վկայագիր, արեան խմբաւորում եւ 4 լուսանկար:

2003 - 2004 տարեշրջանին եւս մանկապարտեզի փոքրիկներուն կը մատակարարուի նախաձայն եւ ձաշ, վարձարանին կողմէ:

**ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ**

Ռուսագիրական

# ԿԻԼԿԱՄԷՇԻ ԳԵՐԵՉՄԱՆԸ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒԱԾ

ԻՐԱԶԻ ՄԵՋ ՀՆԱԳԵՏՆԵՐ ԿԸ ԿԱՐԾԵՆ, ԹԵ ԳՏԱԾ ԵՆ ԿԻԼԿԱՄԷՇ  
ԹԱԳԱՒՈՐԻՆ ԿՈՐՍՈՒԱԾ ԳԵՐԵՉՄԱՆԸ: «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» ԿԸ ԳՐԵ.

«Կիլիկամէշի դիւցազնավէպը» պատմութեան մէջ գոյատեւած ամէնէն հին «գիրքն» է, գրուած՝ միջին արեւելքի գրագէտի մը կողմէ, Քրիստոսի ծնունդէն 2500 տարի առաջ: Անիկ կ'ոգեկոչէ կեանքը իշխանաւորի մը, որ կը տիրէր Ուրուքի, ուրկէ կու գայ իրաքի անունը:

Այժմ գերմանացիներու կողմէ գլխաւորուած հնագէտներու խումբ մը կը հաւատայ, թէ յայտնաբերած է Ուրուքը քաղաքին ամբողջութիւնը, ներառեալ այն շրջանը, ուրկէ ժամանակին կը հոսէր Եփրատը, եւ որ անոր հռչակաւոր թագաւորին հանգստեան վերջին վայրն էր:

«Չեմ ուզեր վճռականօրէն ըսել, թէ գտած ենք Կիլիկամէշ թագաւորին գերեզմանը, սակայն անիկա շատ կը նմանի դիւցազնավէպին մէջ նկարագրուած գերեզմանին», կ'ըսէ Միւնիխի Պատմական կոթողներու հիմնարկին պատասխանատուն՝ Երոկ Տասպինտըր:

Կիլիկամէշի դիւցազնավէպը իրականութեան մէջ կը բաղկանայ շարք մը կաւէ սակիներէ, որոնք արձանագրութիւններ կը կրեն: Անոնք կ'ըսեն, թէ Կիլիկամէշ թագուած է Եփրատ գետին տակ, դամբանի մը մէջ, որ յայտնաբերուած է անոր մահէն ետք, երբ հնագործներ գետին ջուրերը բաժնուած են:

«Քաղաքէն անմիջապէս դուրս գտանք տարածք մը Եփրատ գետին հոսած երբեմնի վայրին մէջ: Նման կառուցի մը մնացորդները կարելի է վերծանել իրեն թաղման վայրը», կը բացատրէ Տասպինտըր:

Տասպինտըր կը բացատրէ, թէ իրաքի անապատին տակէն հնագործներ քաղաքին գաղտնաբերած յայտնաբերումը կարելի եղած է արդի արհեստագիտութեան շնորհիւ:

«Հողին մագնիսականութեան տարբերութիւնները չափելով կարելի է դիտել անոր ընդերքները: Կ'ըսէ Տասպինտըր՝ Եփրատ գետին մէջ տիղմի եւ թրծուած կաւի միջեւ տարբերութիւնը յստակօրէն ցոյց կու տայ կառուցուած տարածքի մը մանրամասնութիւնները»:



Հնադարեան Ուրուքի պեղումներն ի յայտ կու գայ ջրանցքներու կատարելագործուած ցանց մը:

Ասիկա կ'ընձեռէ մագնիսական պատկեր մը, զոր թրուային (տիմիթր) միջոցներով քարտէսագրել է ետք կարելի է ունենալ Ուրուքի յատակագիծը:

«Ամէնէն գարմանալին այն է, որ յայտնաբերեցինք Կիլիկամէշի կողմէ նկարագրուած կառուցներ», կ'ըսէ Տասպինտըր:

Երկար ժամանակէ ի վեր իրաք պատմական յատկանշական յայտնաբերումներու վայր է: «Աւելի քան 100 հեկտար տարածութիւն պեղած ենք: Գտած ենք պարտէզներու եւ դաշտային կառուցներ, այնպէս՝ ինչպէս անոնք նկարագրուած են դիւցազնավէպին մէջ, նաեւ յայտնաբերած ենք բարելոնեան քանակարաններ», կը տեղեկացնէ հնագէտը:

Սակայն ամէնէն գարմանահարչ յայտնաբերումը անհաւատալիօրէն զարգացած ջրանցքներու ցանց մըն է, կ'ըսէ ան:

«Ջրանցքներուն մէջ շատ յստակօրէն կը տեսնենք, թէ ողորդումները քանդած են կարգ մը քանակարաններ, ինչ որ կը նշանակէ, թէ ջրանցքները շատ կատարելագործուած ցանց մը կը կազմէին», կ'ըսէ Տասպինտըր: Անոնք կը յիշեցնեն վեներտիկ անապատին մէջը»:



«Չո՞վ կարելի է բաղդատել անոր արքայական տիպարին հետ: Ո՞վ Կիլիկամէշի մտած կրնայ ըսել՝ ես թագաւոր եմ»:

# ԱՐԲԱՆԵԱԿՆԵՐ ՀՆԱԴԱՐԵԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ ԿԸ ԲԱՐՏԵՍԱԳՐԵՆ

«ՏԸ ՆԻԻ ԵՈՐԵ ԹԱՅՄՁ» ԿԸ ԳՐԵ ԱՐԲԱՆԵԱԿՆԵՐԻ ԱՆՈՒԲԱԾ ԳԱՂՏԻ  
ԼՈՒՄԱՆԿԱՐՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ԿԸ ԳԾԵՆ ՄԻՋԱԳԵՏԻ ՀՆԱԴԱՐԵԱՆ ՃԱՐԲԱՆԵՐՈՒ

Ամբիկեան հետախուզական գաղտնի արբանեակներու կողմէ առնուած լուսանկարներ, որոնք նոր հրապարակուած են, ցոյց կու տան Միջին Արեւելքի անվերջ տարածութիւններուն տակ թաղուած անցեալի մը հետքերը: Անոնք նոյնքան առեղծուածային են հնագէտներու համար, որքան իրարու վրայ գծուած պատկերներով եւ քանի մը խաւերէ բաղկացած պատտառ մը՝ արուեստի պատմաբաններու:

Լուսանկարները մանրամասնօրէն քննելով՝ հնագէտներ յայտնաբերած են հնագրեան քանակավայրերու տարածքներ, որոնք նախապէս վրիպած են հետազոտողներու ուշադրութենէն: Անոնք այժմ սկսած են քարտէսագրել այն անհետացած ճամբաները, որոնք 4000 - 5000 տարի առաջ կը տարածուէին Միջագետքի վրայ:

Շիբալոյի համալսարանին Արեւելագիտութեան հիմնարկէն հնագէտներ կ'ըսեն, թէ նոր քարտէսներուն շնորհիւ կարելի պիտի ըլլայ հասկնալ այսօրուան Մուրիոյ եւ իրաքի մեծ մասը ընդգրկող Միջագետքի քաղաքային կանուխ քաղաքակրթութիւններուն աշխարհագրութիւնը:

Կարգ մը լուսանկարներու քննութենէն ի յայտ եկած են ճամբաներու հետքեր, որոնք կ'առաջնորդեն դէպի հնագրեան ծանօթ քաղաքներ՝ հեռու դէպի անմարդաբնակ շրջաններու մէջ:

Ճամբաները, որոնք անիւի մը երկաթներուն պէս ճառագայթաձեւ կը բաժնուին, կը բնորոշեն իւրաքանչիւր քաղաքի հաստատութիւնը հեռու երկրագործական շրջաններու եւ դրացի բնակավայրերու:

Այլ լուսանկարներու մէջ կ'երեւին քաղաքներ իրարը միացնող ճամբաներ, որոնք հսկայական ցանց մը կը կազմեն եւ կը տարածուին հնագրեան Հալէպէն (Մուրիոյ արեւմուտքը) մինչեւ արդի Մուսուլի շրջանը (հիւսիսային իրաք): Նախապէս հնագէտներ կը կարծէին, թէ այս շրջաններուն մէջ պարզօրէն տեղադրուած ճամբաներուն յատուկ արեւելքին մը ունէին հեռուոր տարածութիւններ կտրելու համար: Յաւելեալ տեղեկութիւններու բացակայութեան պատճառով հնագէտներ ճամբաները գծած են պարզապէս իրենեւ ուղիղ գիծեր՝ գլխաւոր բնակավայրերուն միջեւ: Այժմ անոնք կրնան գծել բազմաթիւ ճամբաներու ճիշդ ուղիներ:

բաներու ճիշդ ուղիներ:

«Այս ներքին ճամբաները քաղաքներու եւ անոնց յարակից շրջաններուն միջեւ կապէ մը աւելին են, կ'ըզրակացնէ Արեւելագիտութեան հիմնարկէն լուսանկարը մը՝ ձէյսըն Ուրի-Շրջանային մակարդակի վրայ, այս ճամբաները կարելի է համարել մասնակներու աւելի մեծ «պողոտաներու» որոնք տեղէ տեղ կ'ուղղուին արեւելք-արեւմուտք ընդհանուր առանցքի մը վրայ»:

ձէյսըն Ուր արբանեակներու միջոցով առնուած լուսանկարներուն հնագիտական վերլուծումները կը ներկայացնէ «Էնթիքոլիթի» թերթին գարնան թիւին մէջ: Նման լուսանկարներ հանրութեան տրամադրութեան տակ գրուած են այն օրէն, երբ 1985ին «Քորոնա» անունով ամերիկեան գաղտնի սպասարկութեան ծառայող արբանեակային ծրագիրներուն ծառայութիւնը վերջ գտաւ եւ անոնց ընձեռած տեղեկութիւնները դադարեցան գաղտնիք ըլլալէ: Նախապէս գաղտնի լուսանկարները այժմ կարելի է գնել համացանցի վրայ, Միացեալ Նահանգներու Երկրաբանական Ուսումնասիրութեան կեդրոնէն:

ձէյսըն Ուր կը բացատրէ, թէ լուսանկարները ցոյց չեն տար հնագրեան ճամբաներուն ճշգրիտ պատկերը, այլ պարզապէս կ'ուրուագրեն անոնց հետքերը: Դրանք ընթացքին մարդոց եւ անասուններու երթելու պատճառով ուղիղ երկարող արահետներ փորուած են հողին վրայ: Ասիկա պատճառ դարձած է, որ ճամբաները կ'ընեն եւ կազմուած փոսերուն մէջ խոնաւութիւն կուտակուելով՝ բուսականութիւն գոյանայ: ճամբաներէն ոմանք 120 մետր լայնք եւ կէս մետր խորութիւն ունին: Անոնք արբանեակներէ առնուած լուսանկարներուն մէջ կ'երեւին իրեն բերկրի մակերեսին վրայ աճած բուսականութեան մէջ նուրբ խախտումներով կէտեր: Այս հետքերուն եւ լուսանկարներուն մէջ երեւցող ճամբաներուն միջեւ կապի մը առկայութիւնը հաստատուած է հիւսիսարեւելքի Մուրիոյ քաղաքի շրջաններուն մէջ: Թէ կ'«Քորոնա»ի լուսանկարները դրական արդիւնք տուած են անջրդի տարածութիւններու ուսումնասիրութեան մէջ, սակայն հնագէտներ կ'ըսեն, թէ անոնք նուազ արդիւնաւէտ կրնան ըլլալ անիւի թաց եւ ժայռոտ տարածութիւններու հետազոտութեան մէջ:

# ՈՒՐԿԷ՞ ԾՆՈՒՆԴ ԱՌԱՃ Է ԵԳԻՊՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ

ԺԱՅՈՒՊՏԱԿԵՐՆԵՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸՆՁԵՈՒՆ ԵԳԻՊՏՈՍԻ ԲՈՒՐԳԵՐԸ ԾՆՈՂՆԵՐՈՒՄ  
ՆԱԽԱԿԱՅՐԵՐՈՒՄ ԿԵՐԱԲԵՐԵԱԼ. ԱՆՈՆՔ ԶԱՐԸ ԴԱՐՈՒ ՀՈՎԻՒՆԵՐ ԷՆ, ՈՐՈՆՔ ԻՐԵՆԵՐ ԵՏԻՆ ՁԳԱԾ ԵՆ  
ԿՐՈՆԱԿԱՆ ՊՏԱԿԵՐՆԵՐ: «ՏԸ ԿԱՐՏԻՆ» ԿԸ ԳՐԵ.

Արեւելեան Սահարայի ժայռերուն վրայ գծուած աւելի քան 6000 տարուան պատկերներ կրնան պատասխան մը ընձեռել հնագիտութեան մեծագոյն հանելուկներէն մէկուն վերաբերեալ, թէ ուրկէ՞ եկած են հնագրեան եգիպտացիները: Պատասխանը անոնք միշտ հոն եղած են:

Եգիպտոսի բուրգերը շինողները հնագիտական արձանագրութիւններու մէջ մուտք գործած են 5000 տարի առաջ: Այս յայտնութիւնը այնքան յանկարծակի էր, որ ծնունդ տուած է երեւակայածին պատմութիւններու, ինչպէս՝ արտերկրացիներու գալուստին, խորհրդաւոր քաղաքակրթութիւններու գոյութեան կամ արշաւող ցեղի մը տիրապետութեան: Սակայն «Ճեմարիս աֆֆարոգ» (փարաւոններու ծնունդը) անունով գիրքին մէջ, որ լոյս տեսաւ Ապրիլին, Քէմպրիջի համալսարանէն եգիպտոսի թուրքի Ուիլքինսոնը տարբեր պատկեր մը կը ներկայացընէ:

Մեմֆիսի հոյակապ տաճարները եւ թագաւորներու հովիտին շքեղ դամբարանները քանդակած մարդիկը ժամանակին քարէ դարու վաչկատուն հովիտներ էին, որոնք ամէն ամառ, երբ Նեղոսը կը յորդէր, իրենց հօտերը կ'առաջնորդէին դէպի գետին հիւսիսը տարածուող շրջաններուն թարմ արօտավայրերը:

Անոնք իրենց ետին ձգած են կրօնական պատկերներու մանրամասն պատ արձանագրութիւններ, որոնք մեծ մասը 2500 տարի ետք ի յայտ կու գայ թագաւորներու հովիտին մէջ:

Նեղոսի քաղաքակրթութեան ծագումը հրատապ նիւթ է տասնամեակներէ ի վեր: «Կը թուի, թէ անոնք ծագում չունին, զարգացման ժամանակաշրջան չունին: Կը թուի, թէ մէկ գիշերուան մէջ յայտնուած են», կ'ըսէ Ուիլքինսոնը: Այս պատճառով մարդիկ տարբեր են թագրութիւններ կ'ընեն, եւ անշուշտ ասիկա պարտաւոր հող կը ստեղծէ ոչ ուղղափառ գիտնականներուն համար, որոնք կ'ըսեն, թէ այս քաղաքակրթութեան սերմերը ցանուած են արտերկրացիներու կողմէ կամ՝ Աթլանթիսէն եկած այցելուներու»:

Ուիլքինսոն իր պաշտօնակիցներուն օգնութեամբ պարզապէս չարունակած է գերմանացի հնագէտ Հանս Վիլքըլրիի սկսած ուսումնասիրական աշխատանքը: Վիլքըլրի Բ. Աշխարհամարտին իր մահէն առաջ հրատարակած է նախնական տեղեկագիր մը կարմիր ծովուն եւ Նեղոսի միջեւ տարածուող անապատին մէջ իր գտած ժայռապատկերներուն վերաբերեալ:

Ան իր ուսումնասիրութեան մէջ երբեք չէ ըսած, թէ իր յայտնաբերած ժայռապատկերները միակն էին, թէ կային նաեւ ուրիշներ: Պատասխանը այն է, թէ շատ աւելի մեծ է ժայռապատկերներուն թիւը: Վայրը լեցուն է եգիպտական ժայռապատկերի արուեստով:

«Կարգ մը վայրերու մէջ անոնք սփռուած են լայն տարածութիւններու վրայ, բարձրաբերձ ժայռերու մակերեսին: Հարկ է երեւակայել, թէ նախապատմական Եգիպտոսի մէջ անոնք տաճարներ էին, սրբազան վայրեր, ուր մարդիկ յաճախ կ'այցելէին», կ'ըսէ Ուիլքինսոնը:

Ուիլքինսոնի ուսումնասիրութիւնը կ'ընդգրկէ հարկուաւոր վայրեր, ուր հնագրեան Եգիպտոսի հիմնարկութենէն 1000 տարի առաջ հովիտներ իրենց ետին ձգած են ռեզեղիւրի, կոկորդիլոսի, հօտերու եւ ամէնէն աւելի՝ աստուածակերպ տիպարներ փոխադրող նաւակներու մանրամասն պատկերներ:

Անոնցմէ իւրաքանչիւրը մեծ ճիշդով քանդակուած է ժայռին մէջ, քարէ գործիքով գինուած արուեստագէտի մը կողմէ: Գրաւոր արձանագրութիւններ չկան հոն: Գրեթէ ոչ մէկ այլ ապացոյց կայ պատկերաւոր պատմութիւններ ժայռերուն վրայ փորագրած մարդոց մասին:



Անպատասխան ժայռապատկերներու մէջ պատկերուած ճաւահներ լոյս կը սփռեն Հիմ Եգիպտոսի քաղաքակրթութեան ծնունդին վրայ:

Սակայն ժայռապատկերները կը պատմեն եղանակային դրութեամբ շրջող հովիտներու մասին, որոնք Նեղոսի հովիտին կը հեռանային ողորդումներու ժամանակ՝ իրենց հետ դէպի Սաւանայի կանաչապատ դաշտերը տանելով իրենց հօտերը:

«Կը կարծեմ, թէ ամէնէն ուշագրաւ բաներէն մէկը պատկերուած նաւակներուն ձեւն է, դէպի վեր ցցուած ցուցկով եւ դէպի ներս փորուած մանգաղի նման յետսամասով, ինչ որ շատ իւրայատուկ է ժայռապատկերներուն արուեստին մէջ, կ'ըսէ Ուիլքինսոնը: Նաւակները կը տեսնենք Եգիպտոսի ամբողջ պատմութեան մէջ եւ սասանաւորաբար՝ թագաւորներու հովիտին մէջ, ուր անոնք յատկապէս երկնային նաւակներ եղած են եւ կ'առնչուին թագաւորին ուղեւորութեան՝ յետ մահու կեանքին մէջ: Ռոբարպէս կը հաւատամ, թէ այս ձեւի նաւակները, որոնք գոյութիւն ունէին Ն.Ք. 4000 թուականին, ոգեղէն դերակատարութիւն մը ունէին»:

Անպատասխան ժայռերուն վրայ գծուած կարգ մը զարդանուշները կը բացատրեն եգիպտական այլ անդրիւրեւութիւնները: «Թուլանի ուրիշ ոգեղէն վրայ կ'ընեն թագաւորութեան, որ իր կողմէն զինուոր բռնած է թագաւորութեան խորհրդանշանները, որոնք նշանակութեան մասին մարդիկ երբեք չեն մտածած», կ'ըսէ Ուիլքինսոնը: Այս խորհրդանշանները կը վերաբերին անասնաբուծութեան: Ինչո՞ւ նա թագաւորը ցուցի պոչ մը կը կրէ, ինչո՞ւ ան մահակ մը բռնած է»:

# ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐ՝ ՄԻՔԻԻՆ

ՄՈՒԿԻ ՄԸ 700 ՏԱՐՈՒԱՆ ՈՐՈՄԱՆԱԿԱՐԸ ԿԸ ՄՐՅԻ ՈՒՈՒԹ  
ՏԻՋՆԻԻ ՄԻՔԻ ՄԱՌՍԻՆ ՀԵՏ: «ՊԻ. ՊԻ. ՍԻ.» ԿԸ ՄԱՆՐԱՄԱՍՆԸ.

Մուկի մը 700 տարուան որմնակարը յայտնաբերուած է, երբ արուեստի պատմաբան մը կ'աշխատէր Աւստրիոյ Մալթա գիւղին եկեղեցիին մէջ: Մուկին նկարը շատ կը յիշեցնէ Ուոլթ Տիգնիի հռչակաւոր մուկը: Անիկա ունի դէպի վեր ցցուած թիթ մը եւ խոշոր ու կլոր ալկանջներ:

Տեղոյն զբօսաշրջութեան գրասենեակին պատասխանատուն կը շեշտէ, թէ այս յայտնաբերումէն ետք հռչակաւոր մուկը Աւստրիոյ քաղաքացին է:

Սակայն արուեստի պատմաբաններ համոզուած են, թէ ջրուէն վնասուած պատկերը բնաւ մուկ մը չի ներկայացնում: Կերպարը պատկերուած է Ս. Քրիստոփորի պատկերին դիմաց ծուկի կէսը դիրքով:

Պատմագէտներու համաձայն, անիկա կրնայ իրօք մկնահարսնուկ մը ըլլալ: Միջնադարուն մարդիկ կը հաւատային, թէ մկնահարսնուկը իր ձագերուն ծնունդը կու տար իր ալկանջներէն:

Աւստրիոյ հարաւային շրջանին մէջ գտնուող այս պահպանողական եւ փոքր գիւղին մէջ խանութպաններ արդէն սկսած են պատրաստուող զբօսաշրջիկներու հեղեղները ընդունելու յուսարով, որ Միքի Մաուսի երկրպագուներ պիտի փութան տեսնելու որմնակարը:

Արուեստի պատմաբաններ կ'ըսեն, թէ յայտնաբերումը կրնայ վերջ դնել Միքի Մաուսի տիպարին վերաբերեալ Տիգնիի հեղինակային իրաւունքին: Տիգնի Միքի Մաուսը ծնունդ առած է 1928ին: Այնուհետեւ անիկա աշխարհի ամէնէն ծանօթ տիպարներէն է եւ հիմը կը կազմէ Տիգնիի կայսրութեան:

Պատրաստեց՝ Լ. ԿԻԼԿԱՄԷՇԻ-ՄՐԱՊԵԱՆ

**«ԱԶԳԱԿ»Ի ՄԵՋ ԾՆՈՒՅՈՒՄԻ ՀՄԱՐ**

Բոլոր անճը, որոնք կը փափաքին «Ազգակ»ի մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցում-վերնու բաժնում ուղարկել հրատարակման թուականէն առնուազ օր մը առաջ, ՄԻՆԶԵԻ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԱԸ 5:00:

ՄԱՀԱՋԳՆԵՐԸ բացառութիւն են: Մահագոյ կ'ընդունուի միւսիս ուշ գիշեր, այնքան ատեն որ գայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հայ Կաթողիկէ Ս. Փրկիչ եկեղեցւոյ ժողովրդապետութիւնը եւ հայ կաթողիկէ բարեսիրական միութիւնը

ՅԻՇԱՏԱԿԻ Ս. ՊԱՏԱՐԱԳ

պիտի մատուցէ եկեղեցւոյ վախճանելի ժողովրդապետներու եւ օգնական վարդապետներու ու միութեան անդամ վարչականներուն հոգւոյն Կիրակի, 11 Մայիս 2003, Պուրճ Համուտի Հայ Կաթողիկէ Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00ից:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ԷՎԼԻՆ ՏԵՄԻՐՃԵԱՆԻ մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 11 Մայիս 2003, Հայ Կաթողիկէ Ս. Եղիա - Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցւոյ մէջ, Տրպպաս հրապարակ, առաւօտեան ժամը 11ից:

ԱՆԻ ՄՈՋԵԱՆԻ (ծնեալ ՕԼԱՆՆԵՍԵԱՆ) մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 11 Մայիս 2003, Հայաշէնի Ս. Յովհաննէս-Կարապետ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՐՇԱԿՈՒՆԻ ԽԱԶՏՈՒՐԵԱՆԻ (ծնեալ ՊԱՔՐՃԵԱՆ) մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 11 Մայիս 2003, Նոր Մարաշի Սրբոց Քառասնից Մանկաց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՆԱԶԱՐ ՍԱՐԱՖԵԱՆԻ մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 11 Մայիս 2003, Ժուզիէի Ս. Յարութեան եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՄԱՆՈՒԿ ԱՆԹՈՍԵԱՆԻ մահուան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 11 Մայիս 2003, Նոր Մարաշի Սրբոց Քառասնից Մանկաց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՕԳՄԷՆ ՄՈՒՂԱԼԵԱՆԻ մահուան քառասունօրեան առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 11 Մայիս 2003, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԲԱՌԹԻ 5432 Պատրաստեց՝ Ս.Ա. ԱՂԱԶԱՐԵԱՆ

Table with 10 columns and 10 rows for the 5432 crossword puzzle.

- 1. Սկանակ - Հերիք:
2. Արմենակ Ղազարեանի յեղափոխական ծածկանուններէն:
3. Պարսիկ կուսակալ - Օն:
4. Տոտու - Մանելիք - Նոյն գիրբը:
5. Դաւաճան:
6. Չոլանի թուրքեր - Սահարի կոխած:
7. Հանրակիւն - Իտալիոյ գետերէն:
8. 451 թ. ճակատամարտին տեղանունը - Դրկից գիրբը:
9. Երասխ գետի ձուկ - Ամուստի մահացած կին:
10. Բրտոն - Ետի դարձած՝ մէկը:

ԹԻՒ 5431
ԽԱՉԲԱՌԻՆ
ԼՈՒԾՈՒՄԸ
1 S N Y U R U S U
2 N T U R X A U A U S
3 O G Y U Y U N R R
4 P N S N R U
5 E U S U L R N Q E
6 N L U N L G U L
7 U N T R U G U N
8 R U S E T R A U
9 U L P N N T N
10 T S O G N U S U

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՎԻԳԷՆ ԶԱԶԱՐԵԱՆԻ Գահատակութեան 11րդ տարեկիցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 11 Մայիս 2003, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

Հ.Յ.Ղ.ԼԵՄ.Ի «ԴՐՕՇԱԿ» ՄԱՍՆԱՃԻՂ

ՍԱԿԱՐԱՆ

Պէտքերի սակարանի մէջ օտար դրամացիներու փակման սակափոցները հետեւեալներն էին երկ. Սուրիական թղթակի 32,50 - 32,60 Լ. իրաքեան տինար 4850,00 - 4860,00 Լ. Բուէյթեան տինար 5035,00 - 5060,00 Լ. Յորդանանեան տինար 2115,00 - 2125,00 Լ. Պահիւնեան տինար 3980,00 - 4005,00 Լ. Ա.Մ. Էմիրութեան տինար 410,00 - 412,00 Լ. Բաթմանի տինար 413,00 - 415,00 Լ. Սեյտական տինար 401,40 - 403,40 Լ. Օմանեան տինար 3890,00 - 3915,00 Լ. Եգիպտական կինէ 241,00 - 251,00 Լ. Անգլիական սթերլին 2415,00 - 2425,00 Լ. Զուիցերիական ֆրանք 1140,00 - 1145,00 Լ. Թրքական լիրա 98,50 - 99,00 Լ. Կիպրական փաունտ 2895,00 - 2920,00 Լ. Ժապոնական հապար եյն 12,85 - 12,95 Լ. Արիւիկեան հապար ֆրանք 13,20 - 13,25 Լ. Ամերիկեան տոլար 1501,00 - 1515,00 Լ. Քանադական տոլար 1073,00 - 1078,00 Լ. Աւստրալիական տոլար 960,00 - 965,00 Լ. Եւրօ 1719,00 - 1729,00 Լ.

ՌՍԿԻ Անգլիական մէկ ոսկի 133,500 - 138,500 Լ. իրանեան մէկ ոսկի 119,500 - 124,500 Լ. Օմանեան մէկ ոսկի 110,500 - 115,500 Լ. Մեքսիկական փէտս 635,000 - 655,000 Լ. Մէկ քիլոկրամ ձուլ ոսկի 16,550,000 - 16,750,000 Լ. Մէկ օնս ոսկի 343,00 - 343,50 \$ Մէկ օնս արծաթ 4,72 - 4,74 \$
● Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը. Եւրօ 1.1415 - 1.1420 Բանառական տոլար 1.3990 - 1.4000 Զուիցերիական ֆրանք 1.3175 - 1.3185 Ժապոնական եյն 116.18 - 116.22 Մէկ սթերլին 1.6056 - 1.6066 Մէկ արծաթ 542 դրամ

ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱՇՆԵՈՒՂԹԵՐ ԳԻՆԻ Ա. ճշդում ԳԻՆԻ Բ. ճշդում
Ա. կարգ 4 4/8 4 5/8
Բ. կարգ 4 5/8 4 6/8
ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

ՄԻՆԻՍ ԿՐԱՆԻ ԱՍՏՂԵՐԸ

ԽՈՑ (21 Մարտին 20 Ապրիլ) Այսօր ունի բազմատեսակ աշխատանքներ, մասնաւորաբար՝ ձեր շրջապատին հետ համաձայնութիւն կնքելու, համեմաշխ ապրելու ընկերային եւ ընտանեկան կեանքին մէջ: Եղէք խոհեմ եւ շրջահայեաց:

ՅՈՒՆ (21 Ապրիլին 21 Մայիս) Ձեր կորովը եւ տրամադրութիւնը բարձրացնելու ձեռք բռնեցէք, դիտեցէք տեսաբանները, ժապաւէն մը, եւ մանաւանդ՝ միացէք գուարթ բարեկամներու:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսին 21 Յունիս) Ուշադիր եղէք ձեր շրջապատին մէջ մանր մուկեր հարցեր ստեղծելու: Թիրիմացութիւն մը կրնայ վեճեր ստեղծել, հետեւաբար եղէք հաշտ ու բարեացակամ:

ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսին 23 Յուլիս) Գնում մը կատարելու կամ հաշի մը պատրաստելու պահուն եղէք գգուչ եւ ուշադիր, որպէսզի հաշի մի մէջ սխալ մը չունենայ, ոչ ալ դրամական կորուստ: Ուրեմն ձեր աչքերը տարբեր քայքայ այսօր:

ԱՌԻԻՄ (24 Յուլիսին 23 Օգոստոս) Բանի մը գործ մտնելու կատարելու մղում պիտի ունենայ: Աշխատանքային ձեր ժամերը պիտի երկարին: Եղէք պատրաստակամ ամենուին նկատմամբ:

ԿՈՅԱ (24 Օգոստոսին 23 Սեպտեմբեր) Շաբաթ պիտի աւարտէք բազմազարդ վիճակով: Շաբաթավերջին հանգստացէք: Գալիք օրերուն համար դասաւորեցէք ձեր աշխատանքները լաւ ձեւով:

ԿՇԻՈՔ (24 Սեպտեմբերին 23 Հոկտեմբեր) Եթէ այս իրիկուն ձեզի անծանօթ վայր մը երթաք եւ այդ արտասովոր բնի ձեզի, համակերպելու դժուարութիւն պիտի ունենայ ձեր շուրջիններուն հետ:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերին 23 Նոյեմբեր) Եթէ տեսակցութիւն մը ունենայ անձի մը հետ, պատրաստ եղէք խաղալու ներկայացուած խաղը, արթնամտութեամբ եւ ճարպիկութեամբ: Արթուն եղէք:

ԱՂԵՂՆԱԻՈՐ (24 Նոյեմբերին 21 Դեկտեմբեր) Ինքնավստահութիւնը լաւ բան է, բայց ծայրայեղութիւնը կը վնասէ: Մանաւանդ՝ եթէ ուսանող էք, քիչ մը համեստ եղէք, որպէսզի սխալներ չգործէք:

ԱՅՏԵՂՋԻՒՐ (22 Դեկտեմբերին 20 Յունուար) Դրամական օգնութիւն մը պիտի կատարէք ներքին մատուցած ձեր ընտանիքին մէկ անդամին: Հոգ մի ընէք: Աստուած կ'օգնէ ձեզի:

ԾՈՎԱՆՈՅԸ (21 Յունուարին 19 Փետրուար) Երեկոյեան փոքր բայց ուրախ սիրային հանդիպում մը պիտի վերածէք անսխործ պահուն մը, որովհետեւ մէջտեղ պիտի բերէք հին օրերէն մնացած քիմիքալը: Իմաստուն եղէք:

ՁՈՒԿ (20 Փետրուարին 20 Մարտ) Ուշադիր եղէք ձեր ուսելիքներուն, մանաւանդ՝ եթէ գաւակներ ունիք: Ձեր մարմինը պէտք ունի հաւասարակշռուած սնունդի եւ քիչ մըն ալ՝ նիհարելու:

ՕՐԱՏԵՏՐ

ՓՈՒՍՏՕՐ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՄ / ԶԲՕՍԱՇՐՉՈՒԹԻՒՆ


18ՐԳ ԳԱՐՈՒ ՄՊԱՆԱՅԻ ԳԻՏՆԱԿԱՆ ՄՈՒԹԻՄԻ ԳՈՐԾԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՄ

18րդ դարու սպանացի բուսաբան Խոսէ Սելեթիսի Մուրիսի գործերը ներկայացրող ցուցահանդէս մը տեղի կ'ունենայ ԵՈՒՆԵՍԿՕ-ի արհեստներու մէջ՝ կայմակերպութեամբ սպանական մշակութային «Սերվանթես» հիմնարկին: Խոսէ Սելեթիսի Մուրիսի, որ նաեւ բժիշկ, բնագէտ, քաղաքագետ, թուրքագետ, հանրաբան, աստղագետ, ուսուցիչ եւ քահանայ էր, ընդարձակ կերպով ուսումնասիրած է ամերիկեան ցամաքամասի մինչեւ այդ բուսական անծանօթ աշխարհը: Գիտութեան այլ ճիւղերուն մէջ իր կատարած գիտելիքներուն առջինը, Մուրիսի կը նկատուի գիտական աշխարհին համար յայտնաբերող ամերիկեան իր մահէն ետք է ամերիկացի Պեյլի Պեյլը, «Միթոս» ամսագրի գործերը, «Ջիո Կոնտ» ցուցահանդէսի մէջ, մինչեւ 9 Մայիս:
- Լուսակերպչական ցուցահանդէս՝ «Պէտրոս Այգ», Բիսպիսի Գաբրիելի գործերը, «Պեյլի» ցուցահանդէսի մէջ, մինչեւ 16 Մայիս:
- Լուսակերպչական ցուցահանդէս՝ «Պէտրոս Ռոլո», Մագնի Ժաննաի գործերը, «Ալ մարիան» քաղաքային մուտքին, մինչեւ 10 Մայիս:
- Երգահանդէս՝ Լիբանանի Ազգային սինֆոնիք նուագախումբի կողմէ, ժամը 20:00ից, «Բոլեօ օրթոտոք» տը Լ.Աննիպոլիտի «Պէտրոս»-ի մէջ:
- Թատրոն՝ «Զըմ Լէյլ» սէյֆ, ժամը 9:00ից, «Ալ մարիան» քաղաքային մէջ:

ԱՅՍՕՐ

- Նկարչական ցուցահանդէս՝ «Ժեյն Ֆամ», Քարին Ունայեի գործերը, «Եսփաս Էս. Տէ.» ցուցասրահին մէջ, մինչեւ 31 Մայիս:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Ճըրնի թուրքալըզ», Ապտէլ Մաուլա Օնէյնի գործերը, «Աստիսիոն փուր լը տելեփան ստիպա» կենդանոցին մէջ, մինչեւ 24 Մայիս:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Միթոս», Սեֆ Ժապարի գործերը, «Ջիո Կոնտ» ցուցասրահին մէջ, մինչեւ 9 Մայիս:
- Լուսակերպչական ցուցահանդէս՝ «Պէտրոս Այգ», Բիսպիսի Գաբրիելի գործերը, «Պեյլի» ցուցահանդէսի մէջ, մինչեւ 16 Մայիս:
- Լուսակերպչական ցուցահանդէս՝ «Պէտրոս Ռոլո», Մագնի Ժաննաի գործերը, «Ալ մարիան» քաղաքային մուտքին, մինչեւ 10 Մայիս:
- Երգահանդէս՝ Լիբանանի Ազգային սինֆոնիք նուագախումբի կողմէ, ժամը 20:00ից, «Բոլեօ օրթոտոք» տը Լ.Աննիպոլիտի «Պէտրոս»-ի մէջ:
- Թատրոն՝ «Զըմ Լէյլ» սէյֆ, ժամը 9:00ից, «Ալ մարիան» քաղաքային մէջ:

ՕՂԵՐԵՈՅԹ



ՈՒՐԱԾ, 9 ՄԱՅԻՍ 2003
ՊԵՅՐՈՒԹ ԱՐԵՒՈՏ
ԶԵՐՄԱՍՍԻՃԱՆ ԹԵՐԵՎ՝ 28°C
ԳԻՇԵՐ՝ 21°C
ԿՈՆԱՒՈՒԹԻՒՆ՝ 45%

ԱԶԳԱԿ 50 ՏԱՐԻ ԱՌԱՋ 9 Մայիս 1953



ՀԱՅԵՐՈՒ ԳԵՂԱՐՈՒԹԵՍԱԿԱՆ ԵՒ ՃԱՐԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՃԱՐԸ ՊԱՆԵԱՆ ԳԵՐՊԱՍՏԱՆԻՆ ԳՈՐԾԸ ՊՈՒՍՏՕՐ ԳՐԱԿՈՒՄԻՆ 500ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ԻՆՉԵՐ ԿԸ ԳՐԵՆ ԹՐԲԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԸ

«Ժամանակ»-ի մէջ (4 Մայիս) կը կարգանք:
Պոլսոյ գրաւումին 500ամեակի հանդիսութեան անթիւ կատարուած շրջանի գեղարուեստական եւ մշակութային գործունեութեան շուրջ պրպտում եւ ուսումնասիրութիւն կատարող թրքական շրջանակներու մէջ ներկայիս ամենէն անելի յեղեղուած անուններէն մէկն է Պալեան գեղարուեստը, որ ինչպէս յայտնուած է, թէ Պոլսոյ եւ թէ մօտակալ թրքացիներու մէջ կերտած է ճարտարապետական հոյակապ գլուխ գործոցներ, որոնք ցարդ կը մնան իբրեւ անգուցական կորուցող գեղարուեստի:
Պալեաններուն կատարած շինարարական մեծ գործին մասին գաղափար մը տալու համար ստորեւ կը ներկայացնենք այդ շինութեան ամփոփ ցանկը, որ քեւեւեւ մէկ մանրամասնութիւն կը պարունակէ, սակայն ինքնին շատ պերճախօս արդէն:
Պալեաններու գերդաստանին հիմնադիրն է Մակար Պալեան, որուն երկու մանչ զաւակներն են՝ Գրիգոր (1764-1831) եւ Սենեքերիմ (°)-1829) Պալեաններ:
Սենեքերիմ մանչ զաւակ չէ ունեցած, իսկ Գրիգոր ունեցած է Կարապետը (1800-1866), Կարապետի զաւակներն են՝ Նիկողոս (1826-1858), Սարգիս (1835-1899), Յակոբ (1838-1875) եւ Սիմոն (°)-1897): Այս չորսն ալ իրենց հօր եւ մեծ հօր մեծանուններն են ճարտարապետ:
Գրիգոր Պալեանի ձեռնարկներն են՝ Սարայլուրնուի պալատը, որ այրած է 1875ին, Աքընքը պուրնուի Սուլթանսարայը, Պէշկիպաշի պալատը, Պէյլերպաշիի հին պալատը, Տէֆերտարի Սուլթանսարայը, Պոլսոյ փողբանոցը, Թօփհանէի Նուսրէթիէ մզկիթը, Սելիմիէի գործարանը, Տաուտփաշայի գործարանը, Այալքըսապի բեթլեհը, Սուլթան Մահմուտի ջրուղիները (Պէնթիւր), Սկիւտարի Ս. Սաչ եկեղեցին:
Սենեքերիմ Պալեանի ձեռնարկներն են՝ Պէշկիպաշիի հին պալատը, Սարայլուրնուի պալատը, որ այրած է 1875ին, Աքընքը պուրնուի Սուլթանսարայը, Պէշկիպաշի պալատը, Պէյլերպաշիի հին պալատը, Տէֆերտարի Սուլթանսարայը, Պոլսոյ փողբանոցը, Թօփհանէի Նուսրէթիէ մզկիթը, Սելիմիէի գործարանը, Տաուտփաշայի գործարանը, Այալքըսապի բեթլեհը, Սուլթան Մահմուտի ջրուղիները (Պէնթիւր), Սկիւտարի Ս. Սաչ եկեղեցին:
Սիմոն Պալեանի ձեռնարկներն են՝ Ելուրգի բեթլեհը եւ Մաշքաշի մթերանոցները:
Անգ զգալի արժեք ունի, որ պատիւ կը բերէ թէ իր հայրենիքին եւ թէ իր ազգին: Օրհնեալ ըլլայ իրենց յիշատակը:

ԱՅՍՕՐ 9 ՄԱՅԻՍԻՆ

1992 - Շուշիի ազատագրում:
1954 - Կը վախճանի Աննայն հայոց կաթողիկոս Գեորգ Զ. Չեօրեքեան:
1964 - Մահ ընկերաբան եւ իմաստասէր փրոֆ. Վահան Տոտմեանցի:

# Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Ր Կ



### ՓԻՆԿ ՓՈՆԿ

## Հ. Մ. Ը. Մ. Ի ՏՂԱՔԸ՝ ԵՐՐՈՐԴ, ԱՂՋԻԿՆԵՐԸ՝ ԱՆՈՅԵԱՆԻ ՏԻՏՂՈՍԻ ՇԵՄԻՆ

Լիբանանի փինկ փոնկի տղոց խմբային ախոյեանութեան իր կատարած վերջին մրցումին, երէկ Մոն Լա Սալի մէջ Հ. Մ. Ը. Մ. Պէյրութ 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Մասնի Սալտան:

Այսպիսով, ինը յաղթանակ արձանագրած եւ երկու պարտութիւն կրած Հ. Մ. Ը. Մ. Պէյրութ մրցաշարքը աւարտեց Յրդ դիրքին վրայ:

Լիբանանի աղկանց խմբային ախոյեանութեան իր կատարելիք վերջին մրցումին, վաղը՝ Շաբաթ, Մոն Լա Սալի մէջ Հ. Մ. Ը. Մ. Պէյրութ աւարտական մրցումին մասն զօրաւոր ճակատում մը ունի կատարելիք Ատապ Ուալ Ռիստայի ղեմով:

Ժամը 3:30ին տեղի ունենալիք այս մրցումը պիտի ըլլայ ճակատագրական, այն իմաստով, որ յաղթականը պիտի ըլլայ Լիբանանի ախոյեան:

### ԼԵՎԱՄ

## ՇԱՐԱԹԱՎԵՐԶԻ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Շարաթավերջին, Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քոլէջի դաշտին վրայ տեղի կ'ունենան Հ.Մ.Ը.Մ. ԼԵՎԱՄի պատմութեան (կիսաւարտական) ժամը 3:00ին մէջ Տասնեակ եւ իրենց աւարտին:

Ստորեւ՝ շարաթավերջին տեղի ունենալիք մրցումներուն յայտագիրը:

<b>ՇԱՐԱԹ. 10 ՄԱՅԻՍ</b>	<b>ԺԱՄ</b>
Մեծ տղար - Կ. Բ. Վ. - Եղիշէ Մանուկեան	3:00ին
Միջակ տղար - Կ. Բ. Վ. - Մեսրոպեան	4:00ին

<b>ԿԻՐԱԿԻ. 11 ՄԱՅԻՍ</b>	
Միջակ տղար - Ճեմարան -	
Մ. Հոնիփսիմեան (կիսաւարտական) ժամը 3:00ին	
Մեծ տղար - Սոֆիա Յակոբեան -	
Մեսրոպեան (ֆայնլը ֆոր) 4:00ին	

<b>ԵՐԵՎԱՆԻ. 13 ՄԱՅԻՍ</b>	
Միջակ աղջիկներ - Յովակիմեան -	
Մ. Հոնիփսիմեան 4:00ին	
Մեծ տղար - Ս. Հոնիփսիմեան - Կ. Բ. Վ. -	
Ս. Մանուկեան, յարակալին ղեմ (ֆայնլը ֆոր) 5:00ին	
Միջակ տղար - Ս. Խանաբեկեան - Կ. Բ. Վ. -	
Մեսրոպեան, յարակալին ղեմ (ֆայնլը ֆոր) 6:00ին	

### ԹԵՆԻՍ. ՊԵՐՆԻՆ

## ՄԱՐԻ ԳԱՅԻԱՆԷ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ԴՈՒՐՍ ՄՆԱՅ

Պերլինի մէջ (Գերմանիա) տեղի ունեցող թենիսի աղկանց միջազգային մրցաշարքին, Գ. Հանգրուանի իր կատարած մրցումներին, երէկ զուգահեռակա՛մ Մարի - Գայիանայի չորս տարեկան եղբայրները շարունակեցին իրենց մրցումները: Գայիանայի 4-6, 6-4 եւ 7-6 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Դուրս Մնայ շարունակեց իր մրցումները: Գ. Հանգրուանի մրցումներուն, պարտութիւն կրողներու շարքին էր նաեւ Ֆրանսուա Երանի, որ 6-2 եւ 6-3 արդիւնքով պարտութիւն մը կրեց Յրդ դասուած ամերիկացի Ճենիֆեր Քափրիայիին:



Զաֆելիցիով կը սոցէ իր արձանագրած յաղթանակը

● **ՀՌՈՍԻ մէջ (Իտալիա)** տեղի ունեցող տղոց թենիսի միջազգային մրցաշարքին Գ. Հանգրուանի մրցումներուն, երէկ ուսուցիչ Քաֆիլիցիով կարեւոր յաղթանակ մը արձանագրեց, երբ մրցաշարքին դուրս ձգեց Յրդ դասուած սպանացի Քարլոս Մոյան, արձանագրելով 6-4 եւ 7-6 արդիւնք մը:

Յրդ դասուած գուցեւորացի Ռոսէ Ֆետերէր իր կարգին յաղթանակ մը արձանագրեց 6-1 եւ 6-1 արդիւնքով պարտութեան մատնելով սպանացի Թոմի Ռոպերտին:

## ՊԵՐՆԻՆ ԸԱՄԱՁԱՅՆ ԶԷ ՄՈՆՏԻԱԼԻ ԽՈՒՄԲԵՐՈՒՆ ԹԻՐԸ 36Ի ԲԱՐՁՐԱՅՆԵԼ

ՖԻՖԱի նախագահ Սէֆ Պիթըր երէկ «Քիթըր» մարզաթերթին հետ իր կատարած հարցազրույցին ընթացքին ըսաւ, թէ համաձայն չէ 2006ի Մոնտիալին մասնակցող խումբերուն թիւը 32ին 36ի բարձրացնելու առաջարկին:

Պիթըր ըսաւ. «Այդ ուղղութեամբ ՖԻՖԱին յատուկ յանձնախումբին կողմէ այդ թիւը բարձրացնելու գաղափարը քիչ մը անյարմար է, թէ աւելի զո՞վ գերմանացի Ֆրանց Պէքընպատըր բաւական խանդավառ է: 36 խումբերու առաջարկը ապագային գծով այդքան ալ նպատակաւոր մը չէ: Այժմու 32 խումբերու դրութիւնը լաւագոյնն է»:

36 խումբերու գծով համաձայնութեան գալու պարագային, երկու յաւելեալ տունակներ պիտի տրուին Եւրոպայի, մէկը Հարաւային Ամերիկայի, իսկ չորրորդը՝ Ասիոյ կամ Հիւսիսային Ամերիկայի (փլէյօֆի դրութեամբ):

Անցեալ շաբաթ այդ ուղղութեամբ Ժընեւի մէջ (Չուիցերիա) խորհրդակցութիւն մը ունեցած ՖԻՖԱի յատուկ յանձնախումբը, յառաջիկայ Յունիս 28ին եւ 29ին Փարիզի մէջ (Ֆրանսա) այլ հանդիպում մը ունենալով պիտի վճռէ, թէ արդե՞ք յարմար է խումբերուն թիւը 32ին բարձրացնելու համար 36ի:

Նշենք, թէ 2006ի Մոնտիալը տեղի պիտի ունենայ Գերմանիոյ մէջ:

### ԱՍԿԻՈՅ ՖՈՒԹՊՈՒԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՆ

## ԱՐՍԵՆԱԼ - ՍԱՌԻԹ-ՀԷՄԲԹԸՆ՝ 6-1

Անգլիոյ ֆուտպոլի ախոյեանութեան գծով յետմաճուած մրցումի մը, Արսենալ իր դաշտին «Հայպըրի» մէջ 6-1 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Սառիթ-Հէմբըրը: Մրցումին արդիւնքը սակայն կարեւոր չէր մարզիչ Արսեն Վենկեթերի կազմին համար, որովհետեւ անիկա արդէն իսկ ապահոված էր փոխախօյեանի դիրքը:

Սակայն այս մրցումին ընթացքին Արսենալի 20 տարեկան մարզիկ Ժերմէյն Փենընթ, որ առաջին անգամ ըլլալով իբրեւ հիմնական մարզիկ դաշտ ներկայացաւ (ախոյեանութեան վենկեթեր կը յայտնէ, որ այդ մրցումի մը), յաղողեցաւ

հիւրերէ մը իրագործելու: Երկրորդ հէմբըրը իրագործեց Ռոպէրտ Փիլիքս, Սառիթ-Հէմբըրի կողմէ նշանակեց Թեմմա: Թէեւ ախոյեանութեան աւարտին մնացած է միայն մէկ հանգրուան, սակայն անոնք երկուքը դարձեալ իրարու դէմ պիտի ճակատեն իր յառաջիկայ Մայիս 17ին՝ Անգլիոյ ֆուտպոլի բաժակի մրցաշարքին աւարտականին, որ տեղի պիտի ունենայ Քարտիֆի մէջ:

Արսենալի վերջին մրցակիցը (ախոյեանութեան) շարաթավերջին պիտի ըլլայ Մանչեսթըրը: Երկու խումբերու միջև:


խումբին խմբագետ Թիեռի Հանրի, որ վերջերս անգլիացի ֆուտպոլիստներուն եւ լրագրողներուն կողմէ ընտրուեցաւ Անգլիոյ տարուան լաւագոյն ֆուտպոլիստը, իր ամէն կարելին պէտք է ընէ, որպէսզի հանդիսանայ կողմնակցներու համար իր յաջողութիւնը: Ան յիշատակեց 25 կէտ, 10 ուղիղ գոլեր 17ին: Անգլիոյ ֆուտպոլի բաժակի մրցաշարքին աւարտականին, որ տեղի պիտի ունենայ Քարտիֆի մէջ:

Սառիթ-Հէմբըրի մարզիչ Կորտըն Սթրաքանի դէմ տեղի ունեցած մրցումին, Արսենալի համար լաւագոյն առիթն է եղանակը փրկել, տիրանալով Անգլիոյ բաժակին:

Ախոյեան Մանչեսթըրը երկու խումբերու վերջին մրցակիցը պիտի ըլլայ Էվըրթըն: Մրցումը տեղի պիտի ունենայ «Կոնտիսըն Փաբը»ի մէջ: Վստահարար, Մանչեսթըրի մարզիկները պիտի փափաքէին իրենց վերջին մրցումը կատարել «Օլտ Քիթի Ֆորտ»ի մէջ, հոն ստանալու համար իրենց բաժակը, սակայն իրականութիւնը այն է, որ անոնք այդ բաժակը պիտի ստանան էվըրթընի դաշտին մէջ, հակառակ այս վերջինին բողոքին:

### ԷՆ. ՊԻ. ԷՅ.

## ՆԵԹՅ ԵՒ ՍՓՐՈԶ ԿԸ ՅԱՌԱՋԱՆԱՆ



Նեթսի մարզիկ Ճէյսըն Էլտ (աջից, թիւ 5)

Էն. Պի. Էյ. փլէյօֆի Բ. Հանգրուանի (կիսաւարտական) երէկուան մրցումներուն, Նիւ Ճըրզի Նէթս (Արեւելեան շրջան) եւ Սան Անթոնիո Սփրոզ (Արեւմտեան շրջան) իրենց երկրորդ յաղթանակը արձանագրելով այժմ 2-0 արդիւնքով կը յառաջանան իրենց մրցակիցներուն վրայ:

Նիւ Ճըրզի Նէթս, որ երկրորդ մրցումն ըլլալով իր դաշտին վրայ կը մրցէր 104-95 արդիւնքով պարտութեան մատնեց Պոսթըն Սեյթիսը: Առաջին մրցումին Նէթսը 97-93 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց:

Երկրորդ մրցումին Նէթսի արձանագրած յաղթանակին մէջ իր բաժինը ունեցաւ Ճէյսըն Էլտ, որ նշանակեց 23 կէտ, 11 ուղիղ գոլեր եւ 8 էփոսթ: Անոր խմբակից Ռիչըրտ Ճէֆըրսը նշանակեց 25 կէտ, 10 ուղիղ գոլեր 10 ֆոլ Փոլ Ֆրայնը նշանակեց 32 կէտ, 10 ուղիղ գոլեր եւ 11 էփոսթ, իսկ անոր խմբակից Անթոնիո Ուոքըր՝ միայն 7 կէտ եւ 9 ուղիղ գոլեր:

Նշենք, թէ երրորդ եւ չորրորդ մրցումները տեղի պիտի ունենան Պոսթընի մէջ:

Սան Անթոնիոյ մէջ, Սփրոզ 114-95 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը Լոս Անճելըս Լէյքըրզը: Հակառակ անոր որ Լէյքըրզի մարզիկ Շաբլի Օնիլը նշանակեց 27 կէտ եւ 10 ուղիղ գոլեր, իսկ անոր խմբակից Քոպէ Պրայընթ՝ 27 կէտ, սակայն այդ մէկը իր լաւ անդրադարձը չունեցաւ անոնց կազմին արձանագրելիք յաղթանակին մէջ: Յաղթական կազմին մարզիկներէն Պրոս Պրոսը նշանակեց 27 կէտ, ինչ որ իր ասպարէզին ընթացքին ամէնէն աւելի շատ կէտերն էին:

Նշենք, թէ առաջին մրցումին Սփրոզ 87-82 արդիւնքով պարտութեան մատնեց Լէյքըրզը: Երրորդ եւ չորրորդ մրցումները տեղի պիտի ունենան Լոս Անճելըսի մէջ:

Այսօր տեղի պիտի ունենան երկու մրցումներ: Առաջինին, Տիֆթըրի Փիսթընը պիտի հիւրընկալէ Ֆրիստեյթիա Սիթըրզը (Արեւելեան շրջան), իսկ երկրորդին, Տայաս Մավըրիթս՝ Սաքրամենթօ Քիսկըր (Արեւմտեան շրջան):

Իր կատարած առաջին մրցումին, Փիսթընը, Տիֆթըրի մէջ 98-87 արդիւնքով պարտութեան մատնեց Ֆրիստեյթիա Սիթըրզը, իսկ Տայասի մէջ, Քիսկը Տայաս Մավըրիթսը, 124-113:

## ՇԵՐԻՆԿՅԵՄԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՉՆՈՐՈՒՄ

Անգլիացի միջազգային նախկին մարզիկ Թեոֆիլ Երիկիկէն յառաջիկայ Կիլիսի օր իր վերջին մրցումը պիտի կատարէ Թեոֆիլի համար հետ, նկատի ունենալով, որ անիւնի մարզիչ Կիլիսի հաստի երկու յայտնեց, թէ այս անգամ անոր նոր պայմանագրութիւն մը պիտի չտուուարկուի: Մրցումը տեղի պիտի ունենայ «Ուայթ Հարթ Լէյն»ի մէջ՝ Պիթըրի մէջ:



Թեոֆիլ Երիկիկէն

Երկու եղանակ առաջ Մանչեսթըր Եունայթըտին Թոթեմհամի միացած 37 տարեկան Երիկիկէն Անգլիոյ ֆուտպոլի դաշտերուն վրայ նշանակած է աւելի քան 300 կոլ, որոնց 13ը՝ այս եղանակին:

Նշենք, թէ նախապէս ալ 1991էն 1997 Երիկիկէն մաս կապած էր Թոթեմհամի:

Երիկիկէն յայտնեց, թէ յուսախաբ եղաւ, երբ իմացաւ, որ իր պայմանագրութիւնը պիտի չերկարաձգուի: Սակայն ան աւելցուց, որ 2002-2003 եղանակին աւարտին անիջապէս ետք, պիտի ուսումնասիրէ իրեն ներկայացած առաջարկները: Ներկայիս, ան առաջարկներ ստացած է իր նախկին ակումբին՝ Միլուոլին, նոր բարձրագոյն դասակարգ բարձրացած Փորթսմութին, Սփորթինգ Լիգային եւ Տուպային:

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «Ռ. ԶԱՐԳԱՐԵԱՆ» ՄԱՍՆԱԳԻԿ**

**50 ԱՄՏԵԱԿԻ ԱՌԻԹՈՎ ԶԵՆԱՐԿՆԵՐՈՒ ԶԱՐԸ**

**Կը ներկայացուի**

**ԸԱՄԱԶԳԱՅԻՆ «ՔՆԱՐ» ԵՒ «ԳԱՅԻԱՆԷ»**

**ՊԱՐԱԽՈՒՄԲԵՐՈՒ ԸԱՄՈՅԹԸ**

**Գեղարունեստական ղեկավար եւ պարուստյոց՝ ՖԵԼԻՔՍ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ**

**Տեղի կ'ունենայ Շաբաթ, 31 Մայիս 2003, երեկոյան ժամը ձիշ 8:30ին, «MONNOT» բաղերասրահին մէջ, Թապարիս:**

**● Տոմսերը ստանալու համար դիմել մասնաձիւղի վարչութեան:**

**«ՎԱՆԱՅ ԶԱՅՆԻ ԱՅՍՕՐՈՒՆ ԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ»**

- **Ժամը 8:30** Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն
- **Ժամը 8:45** «Աստղեր»
- **Ժամը 11:00** Յատուկ յայտագիր՝ լրագրող եւ բեմադրիչ Ճէյմս Միլըրի յիշատակին
- **Ժամը 11:30** Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն
- **Ժամը 12:00** «Մաքուր պահեց հայերէնը»
- **Ժամը 3:00** HIT PARADE
- **Ժամը 5:00** «Գրական Ցուլեր»
- **Ժամը 6:00** «Տայ երգաչխար»
- **Ժամը 6:00** «Տայակական ողբ երաժշտութիւն»
- **Ժամը 8:00** «Վարցամարտ»

ՀԱՍ ՌԻԱԾԻՆ ԿԹԸՆԻ

### ԻՐԱՆ ԱՐԱԳ ԸՆԹԱՅՔԻ ՄԷՋ ԿԸ ԳՏՆՈՒԻ ԿՈՐԻՉԱՅԻՆ ՁԵՆՔԵՐՈՒ ՄՇԱԿՄԱՆ ԳԾՈՎ

ՌԻԱԾԻՆ ԿԹԸՆԻ, 8 (ԱՅՓ).- Միացեալ Նահանգներ ունին այն համոզումը, թէ Իրան արագ ընթացքի մէջ կը գտնուի՝ կորիպային զէնքերու մշակման գծով, իսկ միջազգային ընտանիքը կրնայ արագորէն յայտարարել, թէ անիկա կը բռնաբարէ կորիպային զէնքերու տարածումը արգիլող համաձայնագիրը:

Ամերիկացի պաշտօնատար մը «Տը Նիւ Եորք Թայմս»-ի ըսած է, թէ Իրան ընդ միայն թափ տուած է կորիպային իր ծրագիրներուն կիրարկումին, այլ նաեւ՝ «անոր ծրագիրներուն մասին միայն վերջերս յայտարարութիւններ, որոնք երկու տարիէ է վեր տեղի կ'ունենան»:

Ան աւելցուցած է, որ Իրանի նաեւ անդադար կը պահանջէ Մ. Նահանգներէն, որ «այդ հարցին լրջօրէն մտնեն»:

Նախագահ ձորձ Պուշի վարչակարգը կորիպային Ուժանիւթի Միջազգային Գործակալութեան անդամ երկիրներուն վրայ կը ճնշէ, որ պէտքի առկայ յայտարարեն, թէ Իրան կը բռնաբարէ համաձայնագիրը: Գործակալութեան անդամներ են Ռուսիա եւ արեւմտեան եւրոպական երկիրներ:

Նման յայտարարում մը, ըսած է օրաթերթը, կրնայ ՄԱԿի կողմէ պատժական միջոցառումներու դուռ բանալ Իրանի դէմ:

Գործակալութիւնը Յունիսի կէսերուն ժողով մը պիտի գումարէ: Մ. Նահանգներ կ'ուզեն, որ ճնշում բանեցուցի անոր ընդհանուր տնօրէն Մոհամէտ Պարատիի վրայ, որ պէտքի առկայ ան խիստ ձեռով ներկայացնէ Իրանի կորիպային ծրագիրը: Փետրուարին ան քննիչներու խմբակի մը հետ այցելած էր կեդրոնական Իրանի Նաթանզի իւրանիումի հարստացման մէկ գործարանը:

Ըստ ամերիկացի պաշտօնատարներու, անոր այցելութեան յոյսին տակ կատարուած գնահատումը եւ «այլ երկիրներու գաղտնի սպասարկութեան տեղեկութիւններ» պատճառով համոզած են, թէ այդ վայրը զէնքերու արտադրութեան կեդրոն մըն է:

ԸՍՏ ՀԱՐԱՄԱՅԻՆ ՔՈՐԸԱՅԻ

### ՀԻՍՏԻՍԱՅԻՆ ՔՈՐԸԱՅԻ ԿՈՐԻՉԱՅԻՆ ԳՈՐԾԱՐԱՆԻՆ ՄԷՋ ՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹԻՒՆ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ

ՍԵՆՏԵՐ, 8 (ԱՅՓ).- Հարաւային Քորէա, հաստատելով, թէ Հիւսիսային Քորէայի կորիպային ուժանիւթի գործարանին մէջ նոր գործունէութիւն տեղի կ'ունենայ, Հինգշաբթի օր ուժերը զգուշացուցած է, թէ Փիոնկեանկ կրնայ պիտուրական «իրահարում մը» ծրագրել «բանակցելու իր ուժին թափ տալու համար»:

Հարաւային Քորէայի նախագահին բանբերը՝ Եուն Թէյ-Եունկ ըսած է, թէ անցեալ ամսուան վերջերուն Հիւսիսային Քորէայի կորիպային գործարանին մէջ գործունէութիւն նկատուած է, սակայն ստիկա չի նշանակեր, թէ Փիոնկեանկ սկսած է զէնքերու յատուկ փոխադրում արտադրել:

Պաշտպանութեան նախարար Եունկ-Քիլ ըսած է, թէ Սեուլի համար առաջնահերթութիւնը պէտք է ըլլայ «պատերազմելու կատարելապէս պատրաստ ըլլալ» թշնամիներու հրահրումներուն դիմադրելու համար:

Ամերիկացի եւ հիւսիսային քորէացի պաշտօնատարներ անցեալ ամիս Պէյճիկի մէջ ժողով մը գումարած էին՝ կորիպային տագնապին լուծման համար, սակայն անոնք չէին յաջողած շօշափելի արդիւնքներ ապահովել:

**AREV**  
BOUTIQUE

JAL EL DIB-CENTER OSCAR  
TEL.: (04) 715 170 FAX: (04) 713 397  
BOURJ HAMOUD-CENTER ARINE  
TEL.: (01) 254 953-4  
AREV@hotmail.com

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՀՄՍՄՇԵՆԱՐՀԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՀՄՍՄՋԱՅՆ

### ՍԱՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԸ ԿԱՐԵՒՈՐ ԸԱՆԳՐՈՒԱՆԻ ՄԸ ԸԱՍԱԾ Է

Առողջապահութեան Համաշխարհային Կազմակերպութիւնը երէկ յայտնած է, թէ Չինաստանի մէջ ՍԱՐՍի դէմ պայքարը կարեւոր հասցրուանի մը հասած է, նկատի ունենալով, որ յաւելեալ 2 նահանգներու պարագային յայտարարուած է, թէ պէտք չէ այցելել, իսկ պահելու իր կեցման տարածքները եռապատկուած է:

Կազմակերպութիւնը զգուշացուցած է, թէ պէտք չէ այցելել ներքին Մոնկոլիա եւ Թիանճին, ինչպէս նաեւ՝ Թայուանի մայրաքաղաքը՝ Թայպէյ, որ ՍԱՐՍի պատճառով մահերու թիւը բարձրացած է:

ՄԱԿի կազմակերպութեան մասնագէտներ արդէն իսկ յայտնած են, թէ Չինաստան «բանալին» է աշխարհի մէջ ՍԱՐՍի տարածման կանխարգիլման:

Հիւսիսային Վիետնամի 30 երկիրներու մէջ արդէն իսկ աւելի քան 500 զոհ խլած է եւ վարակած՝ աւելի քան 7000 անձեր:

Երէկ Չինաստանի մէջ յայտարարուած է, թէ 5 նոր զոհեր արձանագրուած են, ներառեալ՝ ելեւմտական մայրաքաղաք Շանկիայի

մէջ զոհ մը, ինչ որ երկրին մէջ զոհերուն ընդհանուր թիւը 224ի կը բարձրացնէ, 4698 վարակուածներու կողքին:

Ապրիլ 20էն ի վեր, երբ Չինաստան վերջ տուած էր ՍԱՐՍի պատճառով արձանագրուած վնասներու տարողութիւնը գաղտնի պահելու իր կեցման տարածքները, հիւսիսային Վիետնամի սանձելու համարի գործ դրուող ճիշտ գերը կեդրոնացած են գլխաւորաբար Պէյճիկի վրայ:

Այսուհանդերձ չինական իշխանութիւններն ու ՄԱԿի կազմակերպութիւնը ներկայիս իրենց ուշադրութեանց կեդրոնը կը դարձնեն նուազ բարգաւաճ շրջանները: Երէկ քննիչներ ուղղուած են զիւղական շրջանները, որ կան մտավախութիւններ, թէ հաւաքական վարակումներ կրնան արձանագրուիլ:

Մինչ այդ, Թայպէյի պարագային թելադրանքը կատարուած է, նկատի ունենալով, որ անցեալ շաբաթ մահերու թիւը արագ բարձրացած է, Չորեքշաբթի օր 14ի հասնելով:

Հոնկ Բոնկի մէջ երէկ հաղորդուած է,

որ յաւելեալ 4 անձեր մահացած են եւ 7 նոր պարագայի գծով հաստատուած է, թէ ՍԱՐՍէ կը տառապին: Հոնկ Բոնկի մէջ ցարդ 208 հոգի զոհ գացած է հիւսիսային:

Չինաստանի եւ Հոնկ Բոնկի կողքին, ՍԱՐՍի պատճառով մահեր արձանագրուած են Սինկափուրի, Մալեպիոյ, Վիետնամի, Ֆիլիպիններու եւ Թայլանտի մէջ: Ասիայի դուրս միակ երկիրը, որ մահ էղած է՝ Քանաստան է (23 հոգի):

#### ՈՌՍԻՈՅ ՄԷՋ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԱԳԱՆ

ՍԱՐՍի գծով մտավախութիւնները երէկ հասած են Չինաստանի դրացի Ռուսիա, որ առողջապահութեան մարտի պաշտօնատարներ խոստովանած են, թէ 25 տարեկան ռուս տղամարդ մը, որ չինական սահմանին մօտ հիւսիսային գրեթէ վատաօրէն Ռուսիոյ մէջ ՍԱՐՍի առաջին պարագան կը ներկայացնէ:

Ռուսիա երէկ արտակարգ միջոցառումներու դիմած է, արգիլելու հիւսիսային երկիր մուտքը:

ՍԱՐՍը շատ ծանր անդրադարձ ունեցած է Ասիոյ տարածքին տնտեսութիւններուն վրայ: Ամէնէն մեծ հարուածը ստացած են օդանաւային ընկերութիւնները, զբօսաշրջութիւնը, պանդոկներու եւ ճաշարաններու մարկետը:

Աւստրալիական «Քուանթա» ընկերութիւնը յայտնած է, թէ այս տարի իր վուտ շահերը 30 առ հարիւրի անկում պիտի արձանագրեն:

### ՄԵՌՏԱԿԱՆ ԱՐԱՔԻԱ ՔՈՂԱԶԵՐԾԱԾ Է «ՔԱՅԻՏԱ»-Ի ԲՋԻՋ ՄԸ

ՌԻԱՏ, 8 (ԱՅՓ).- Մէրտական Արաքիա յայտնած է, թէ Քողազերծած է «Քայիտա» ցանցին պատկանող բլիթ մը, որ կը ծրագրէր երկրին մէջ մեծ յարձակումներու ձեռնարկել: Ներքին ապահովութիւնը խախտելու նպատակով:

Ներքին գործոց նախարար Նայէֆ Պըն Ապտիլ Ազիզ Հինգշաբթի օր հրատարակուած հարցազրոյցի մը մէջ ըսած է, որ բլիթին անդամները Աֆղանիստանի մէջ մարգոլած են:

Ան յայտնած է, սակայն, թէ պէտք է զանոնք ձերբակալել: «100 առ հարիւր վստահ ըլլալու համար այս տեղեկութեան մասին»:

Նախարարը ըսած է, թէ անոնց մէկ մասը ձերբակալուած, ապա ազատ արձակուած է, որովհետեւ ի յայտ եկած է, թէ ցանցին մէջ անոնց զերակատարութիւնը շատ սահմանափակ էղած է:

Նայէֆ իշխանին համաձայն, զբաւուած մեծ թիւով զէնքերը սահմանէն մաքսանենդուած են:

Ան դիտել տուած է, որ մէկնէն վտանգաւորը պայթիւցիկ նիւթերը եղած են «շատ մեծ քանակութեամբ եւ բարձրորակ», ինչ որ կը նշանակէ, թէ կը ծրագրուէր շինքեր կամ մեծ վայրեր պայթեցնել, ըսած է իշխանը:

Անոր յայտարարութիւնը օր մը առաջ, ներքին գործոց նախարարութիւնը ըսած էր, թէ ապահովութեան ուժերը կը հետապնդեն 17 սէուտցիներ, իրաքեան ծագումով բուէլթիցի-քանատացի մը եւ եմէնցի մը՝ Ռիստի մէջ ոստիկանութեան հետ թախուժ մը ետք:

### ՀՆԴԿԱՍՄԱՆ - ՓԱՔԻՍՄԱՆ ՄԵՐՁԵՑՄԱՆ ԳԾՈՎ ԹԷ՛ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ, ԹԷ՛ ԶԳՈՒՇԱԻՈՐՈՒԹԻՒՆ

ՆԻԻ ՏԵԼԷՒ, 8 (ԱՅՓ).- Հնդկ երեսփոխաններ Հինգշաբթի օր պարակցութիւն յայտնած են Փաքիստանի հետ խաղաղութեան հաստատման քայլերու գծով, սակայն զգուշացուցած են արագորէն երկկողմանի բանակցութեանց դիմել, մինչ ընդդիմադրութիւնը կը յայտնէր, թէ կառավարութեան նախաձեռնութեան տեղի արտաքին ճնշումներ կան:

Վարչապետ Աբալ Պեհաբի Վաճիպալի անցեալ շաբաթ անակնկալի մատնած էր դէտերը, երբ կոչ ուղղած էր Փաքիստանի հետ դիւանագիտական ամբողջական կապերու վերահաստատման:

Մ. Նահանգներու արտաքին գործոց փոխ նախարար Ռիչըրտ Արմիթէյճ Փաքիստանի մէջ Հինգշաբթի օր տեսակցութիւններ ունեցած է պաշտօնատարներու հետ: Ան պիտի այցելէ նաեւ Հնդկաստան՝ «քաջալերելու համար» երկու կողմերուն խաղաղարար քայլերը:

### ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ ՀԱՆԴԻՊՈՒՄ... Ծարուճակուած Ա. ԷջԸԸ



Ֆրանսա, Գերմանիա, Ռուսիա եւ Չինաստան: «Ինչ որ անցեալին պատահեցաւ, անցեալին մէջ մնաց», ըսաւ Փաուրլ, ակնարկելով Ռուսիայի եւ անոնց միջեւ տարակարծութիւններուն: Ան աւելցուց, որ բանաձեւը Իրաքի մէջ կարեւոր դերակատարութիւն պիտի վերապահէ ՄԱԿի:

Միւս կողմէ, Միացեալ Նահանգներու արտաքին գործոց փոխ նախարար Ռիչըրտ Արմիթէյճ վստահեցուց, թէ ուշ կամ կանուխ պիտի գտնուին Իրաքի հաւաքական քանդումի զէնքերը: Ան շեշտեց, որ ամերիկեան սպասարկութեանց տեղեկութիւնները չեն կրնար սխալ ըլլալ, որովհետեւ անոնք հիմնուած են փաստերու վրայ:

ՌԻԱՔԻ արդարութեան նախարարութեան ամերիկացի խորհրդատուն՝ Բլինթ Ռիլիքըմըն հաւանական նկատեց, որ իրաքեան ոճրարատ յատուկ ստեան մը յառաջացուի՝ դատելու համար Սատամ Հիւսէյնն ու անոր իշխանութեան բարձրաստիճան անդամները՝ իրաքցի ժողովորդին դէմ գործած իրենց ոճիրներուն համար:

### ԿԻԻԼԻ ՆՈՐ «ՀՆԱՐՔ»Ը՛ ՀԻՄՆԱՅԻՆ ԿԻՊՐՈՍԻ ՀԱՐՑՈՎ

ԼՈՆԾՈՆ, 8 (ԱՅՓ).- Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Ապտիլլա Կիլլ բրիտանական «Տը Յայնէն-շըլ Թայմզ» թերթին յայտնած է, թէ ժամանակը յարմար է թուրք կիպրական շրջանին դէմ հաստատուած միջազգային պատժամիջոցներուն ջնջումին համար:

Հինգշաբթի օր հրատարակուած հարցազրոյցի մը մէջ կիլլ ըսած է, որ պատժամիջոցներուն ջնջումը պիտի օժանդակէ ստեղծելու լուծումի մը համար անհրաժեշտ կլիման՝ առիթ տալու միացեալ կիպրոսի մը, որ 2004 Մայիսին Ե. Միութեան անդամակցի:

«Որոշ վստահութիւն մը հաստատենք, ապա շատ մեծ բան պիտի չմնայ բանակցութեանց սեղանին վրայ լուծելու համար», յայտնած է ան:

**GEMPCO**  
General Mechines & Metal Producing Co. LTD

**Main product line**

- All kinds of cooking and baking ware made of aluminum
- Many kinds of ashtrays and table ware for restaurants
- Floor squeegees of various sizes made of plastic or metal
- Ice buckets made of stainless steel or aluminum
- Cleenet - Window wipers
- Barbecue skewers made of stainless steel
- Barbecue grills with different sizes and models
- Silk Screen Printing on all kinds of ash trays and other products for advertisement
- Production of all kindz of decorative and practical display shelves for shops and magazines made of wire or other materials

Mazraat Yeashou, main road  
Tel.: 04/92 60 08 P.P.Box: 30 Bilkfaya